



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lucy

✓

334,335,336

128

~~621~~

~~379~~

378

2000

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՆՈՒԷԼ

ԵՐՐՈՐԴ ԳՐԶՈՅԿ



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մաֆսե Վարդանեանի
Тип. М. Вартамянца, Вельямин. ул. № 7.

1901


1654 P

В. П. П. П. П.

УЧЕБНИК

Дозволено Ценз. Тифлисъ, 5-го Марта 1901 г.

28-335



336-2003

ԱԶԸՂՈՒԹԻՒՆ

ԵՒ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ

Աւետիբը շատ լաւ դիտէր այն առածը, թէ՛ «վէմն ապառաժի է հազիպեր», բայց չէր ուզում խոստովանել, որ եթէ ինքը վէմ չըլինէր, իր որդին էլ ապառաժ չէր լինիլ: Մոլեռանդ զաւակներ կունենան, թէկուզ միմեանց հակառակ գաղափարով:

Գեղամիջով հեռանալիս՝ Արութիւնի առաջը ոչ որ չըկտրեց. չէր էլ կարծում ոչ որ, որ նա գլուխը վեր կալած՝ դնում է կորչելու, որ ազատուի հօր հալածանքից: Մի ժամից յետոյ մայրը ձիաւորներ ուղարկեց որդու ետեից, որ յետ դարձնեն, բայց չըզտան. նա ճամփից շեղւելով՝ մտել էր անտառն ու անյայտացիլ:

Արուժիւնը շատ հեռու չըգնաց. նա պը-
տըտուում էր Լօռու և Շիրակի գիւղերում, ուր
մի տեղ վարժապետ էր դառնում, մի այլ տեղ
տիրացուծիւն անում, մի տեղ նախապանի
հետ էր ընկերանում, մի այլ տեղ չօբանի, բայց
ոչ մի տեղ մի քանի ամիս չէր մնում, ոչ մի
տեղ նրա ոտքը չէր կապուում: Նա կարծես մի
բան էր կորցրել, ման էր գալիս որ գտնի,
բայց չէր գտնում: Չէր խմանում, որ կորածն
ինքն է, ինքը պիտի գտնէր ում և իցէ ձեռ-
քով և լոյս աշխարհք հանէր: Շատ անգամ
սարից սար, հովիտից հովիտ անցնելով՝ որսոր-
դուծիւն էր անում և նրանով հոգում իր հա-
գուտն ու կապուտը, թէ և նպատակն այդ չէր.
նա թափառում էր անգիտակից, ինչպէս մի
վայրենի:

Այս վայրենի վիճակը զարգացրից Արու-
ծիւնի ներքին և արտաքին զգացումները, նրա
տեսուծիւնը, լսողուծիւնը, հոտառուծիւնը,
ընկալողւմը, մտառուծիւնը, նկատողուծիւնը,
խորհողուծիւնը և երևակայուծիւնը: Նա զար-
գացաւ և փիղիբապէս: Գարնանային և ամա-
ռային բացօդեայ կեանքի մէջ, հով ու դով տե-
ղերում, ծաղկապատ լեռներում, անմահական

աղբիւրների ափերում, մութ անտառներում և
ձորերում շարունակ թափառելով՝ Արուծիւնը
մի բոլորովին նոր մարմին հագաւ, աւելի առ-
ողջ ու զօրեղ, աւելի հաստ ու կոպիտ, քան
թէ առաջ էր: Ո՞վ կարող էր կարծել, որ Արու-
ծիւնը սկը սպիտակից ջոկել գիտէ, թէ նա
երբ և իցէ Ալբերտի մթնաբանութեան ծանր
լուծի տակ ընկած է, թէ նա Չամչեանը ծայրէ
ի ծայր անգիր է արել աշրդի խալի պէս:

Չընայած արտաքին կոպտութեանը, նա
չըկորցրեց սրտի գիւրազգացուծիւնն ու քըն-
քուծիւնը: Բնաւորութեամբ երկու սեռի մի
խառնուրդ էր ներկայացնում և այդ երկու իրար
հակառակ կողմերը մերթ հաշտուում և օգնում
էին միմեանց և մերթ կուռում ու ընկճում մի-
մեանցից, նայած, թէ որտեղ որ կողմն էր ա-
ւելի պէտք, կամ որպիսի տրամադրուծիւն ու-
նէր հոգին: Բնուծիւնը նրան այնպէս էր կազ-
մակերպել, ինչպէս դարբինը նրա երկսայրին,
խանչալը, որի մի բերանը հաստ էր թողել՝
բար ու քոլ կտրելու համար, միւս բերանը՝ բա-
րակ՝ փափուկ բաները ածլու պէս թոցնելու
համար: Նա մի գաղան էր և միևնոյն ժամա-
մանակ մի սոխակ. գոռում էր գաղանի պէս և

երգում սոխակի նման: Պատահմունքը երբեմն այնպէս է կրթում մարդու, որպէս կարող չէ կրթել ոչ մի տաղանդաւոր դաստիարակ. ով կարող է արհեստական կերպով տալ մէկին այն, ինչ որ միայն բնութիւնը կարող է տալ, բնութիւնը, որ գիտէ չոր անապատներից մարդարէ յարուցանել: Մտածող միտքը, զգայուն սիրտը միայնութեան մէջ, բնութեան գրկում, նրա մեղմ ու ահեղ երեւոյթների ազդեցութեան տակ՝ վերանում է մտքով և յափշտակում մինչ երկինք, հմայում, կախարդում է և հոգով ու մարմնով անձնատուր լինում մի աներևոյթ Զօրութեան: Այնուհետև գիտակից ոչինչ չի լինում. նա վարում է ինչպէս մի խենթ, բայց խելքը չըկորցրած, այլ վերացրած, թուցրած դէպի վեր, դէպի բարձրը ինչպէս առասպելական Պեգասը Հէլիոսեան լիւների միջնորդութեամբ:

Արութիւնը շարունակ մտմտում և մըրմուռում էր դերիշի նման: Խօսակից ընկեր չունենալով, խօսում էր ինքն իր հետ. ինչ օգտյին ամբողջներ ասես, որ չէր չինում, ինչ ասես որ չէր դառնում «խրթ թէ»: Իրապէս մի մութ անտառում կամ մի լեռան գագաթի վրայ նստած՝ երևակայութեամբ նա վայելում էր աշ-

խարհի բոլոր վայելչութիւնը, բոլոր փառքը, պատիւը, երջանկութիւնը, ընկնում էր և սարսափելի նեղութիւնների մէջ, բայց ամեն տեղից դուրս էր գալիս յաղթութեան դրօշակը ձեռին: Եւ ինչքան բարիք էր հասցնում մարդկութեանը, ինչքան երջանկացնում նրանց և փոխարէնը վայելում նրանց գովասանքն ու օրհնութիւնը: Դեմոսթենէսի պէս ճառեր էր ասում և ատենաբանութիւն անում, Քեօբօղլու պէս երգում էր յաղթական և բաջութեան երգեր, Քեարամի պէս ողբում էր և վնասում իր Ասուն: Երգում էր և անպատրաստից՝ առանց կանգ առնելու, ինչպէս շաւարա, որ կրնա նակէ ոտանաւոր ազատ խօսող: Այդ ընդունակութիւնը նրա մէջ նման էր ճարպիկ լարախաղացի և զօրեղ ըմբշի ոգևորութեան: Այդ ոգևորութիւնը տեսանելի և չօշափելի է: Ըմբշները ուռչում են, նրանց բոլոր երակները լցում է արիւնով. լարախաղացները թեթևանում են, կարծես թիւաւորում են: Այս միջոցին վիճակի մէջ են ընկնում և աշըղները ոգևորւած ժամանակ, մանաւանդ իրար հետ բաց մտած ժամանակ: Արութիւնը սգեւորում էր թէ ըմբշի, թէ լարախաղացի և թէ աշըղի նման: Նա զուրկ

չէր առաջինի ուժից, երկրորդի հարադիմութիւնից: Միայն սաղ չունէր, և ոչ ածել գիտէր. հայրը չէր թոյլ տւել սովորելու: Նա շուրջ էր ածում, որովհետև հեշտ էր դրա ձեռք բերելը. ինքն էր շինում. բայց շատ էր ցանկանում մի սաղ էլ ձեռք բերել և իսկական աշղղ դառնալ՝ աշղղութիւնը բարենորոգելու նպատակով: Այդ ժամանակ լաւ աշղղները շատ մեծ հռչակ և հեղինակութիւն ունէին ժողովրդի մէջ և մեծ յարգանք ու պատիւ էին վայելում: Բայց Արութիւնն ընդդէմ էր նրանց թէ յանգահիւստութեան անճոռնի ձևին, թէ թուրքերէն երգելուն և մանաւանդ նրանց չափից դուրս ստայօղ պատմութիւններին, որոնցով շարունակ նախապաշարմունքի մէջ էին պահում ժողովրդին: Նրանք աւետարանի և Աստածաշնչի պատմութիւնները ծաղկացնում էին և պատմում այնպիսի աւելածներով, որ տէրտէրների բերանը բաց էր մնում:

Մէկ անգամ լսեց, որ Հայդարբէգ գիւղը մի շատ անւանի աշղղ է եկել, թէ նա շատ աշղղների հետ է բաց մտած և սաղերը ձեռքներիցը խլած, մտքումը դրաւ գնալ նրա հետ բաց մտնել, յուսալով՝ որ անպատճառ կը յաղ-

թի և սաղը ձեռքիցը կառնի: «Աբովեանցի ա-սած, խանչալիս քարը հօ չի վէր ընկնիլ, մի աշղղ էլ ես կդառնամ», ասաց Արութիւնն ինքն իրան: «Եթէ ես կը յաղթեմ, սաղը ձեռքիցը կառնեմ, իսկ եթէ նա կը յաղթի, ես իմ հրացանս կը տամ իրան, բայց յետոյ մի թաքուն տեղ առաջը կը կտրեմ, համ իմ հրացանս կը խլեմ ձեռքիցը՝ համ իր սաղը. թող գնայ՝ որ տեղ որ իրանը կասի, իմն էլ էնտեղ ասի: Պրանց օյին գալը մեղք չէ. բօշի նման դռնէ դուռը ման են գալիս, ժողովրդին սուտ սուտ բաներ հաւատացնում. յետոյ որ մի ուղիղ բան ես ասում, էլ չեն հաւատում. ասում են՝ գիժ ես: Մէ որ գիժ եմ, գիժ եմ, ես էլ գժութիւն կանեմ».

Այսպէս մտածելուց յետոյ Արութիւնը ճանապարհ ընկաւ գէպի Հայդարբէգ գիւղը: Արժանի է նկարագրութեան նրա այդ ժամանակաւ հագուստը: Նա ունէր վայրի վարաղի հաստ կաշւից տրեխներ, արխալուխի փեշերը հաւաքած էր բրդէ շաւարի մէջը, օսի չուխա ունէր հագին՝ փեշերը վեր կապած, մի մեծ՝ թարաքեամի փափախ ունէր գլխին՝ ճակատի կողմը ներս ծալած: Վայրի այծի կաշւից մի պարկ

ունէր չալակին՝ մէջը մի կտոր սև հաց և մի կտոր էլ թիւ պանիր։ Ատրճանակը մէջքի կողմից գոտիկը խրած, խանչալը ձախ կողմից կախած, հրացանն ուսը գցած և մի հաստազլուխ թաւարզին անունով մահակ ձեռքն առած։ Արութիւնի այսպիսի տեսքը՝ նրա երկար հասակի, վառվռուն և խոշոր աչքերի, արհամարհող հայեացքի և յանդուգն բնաւորութեան հետ միասին՝ շատերին կասկածանքի տեղիք էին տալիս, թէ նա գուցէ մի փախստական աւադակ է։ Այդ կասկածն աւելանում էր, երբ Արութիւնին հարց ու փորձ անելիս, նա սուտ չէր ուզում հնարել, ուղիղն էլ չէր յայտնում, թէ ով է կամ ով չէ։ Արութիւնն այդ չէր նկատում և ոչ մտքովն անց կացնում, թէ կարող են այդ տեսակ կարծիք ունենալ իր վրայ, եթէ ոչ՝ նա կարող էր նրանց կասկածը փարատել։ Նա աւադակութեան ոչ հակում ունէր և ոչ ընդունակութիւն. աւելի շուտ քաղցած կը մեռնէր կամ ինքնասպանութիւն կը գործէր, քան թէ գողութիւն կանէր, որովհետև նա իր մահկութեան օրից մինչև այն օրը մի ամենաշնչին բան գողանալու կամ թաքուն վերցնելու միտք անգամ չլացած չէր։ Նրանից կասկածում էին

աւելի շիրակեցիք, որոնք մեղք էին համարում զէնք կրելը, մանաւանդ նրան բանեցնելը, և սրա համար էլ շատ յաճախ երկու թուրք երիտասարդ նրանցից մինչև յիսուն հոգու իրանց թրերի առաջն էին անում, ահագին կարաւանի բոլոր եղները բշտւած անց կացնում Արփաշայը և անհետացնում։

— Հախն է, ասում էր Արութիւնը, ինչո՞ւ ձեզ էլ չէին կոտորում այդ անպիտանները...

— Ձանլմ, ի՞նչ կըսէ, բացականչում էին շիրակեցիք։

— Չու ու ցաւ կըսեմ... անամօթ յիմարներ, ի՞նչ երեսով էք երևում դուք ձեր օղլուշաղին. ինչո՞ւ դետինը չէք մտնում։ Մեր գեղի երեսան անգամ եթէ կողոպտուի, նա կամաշի տուն դնալ հօրն ու մօր աչքին երևալ. դուք ահագին զուրի տղամարդիկդ ի՞նչպէս չէք ամաշում կողոպտուել երկու թուրք գեաղայի ձեռքով...

Արութիւնը հեռացաւ այդ տեղից և գնաց Լօռի, ուր և իմացաւ համբաւաւոր աշըլի գալը։ Նա գնաց Հայդարբէզ և հանգիպեց աշըլին այն ժամանակ, երբ նա ուզում էր մի մարաքեա սարքել մի բանի աշակերտների հետ։ Մարաքեայի նիւթը սլիտի լինէր Գուգի դուշի հէ-

քիաթը: Գիւղի քէթխուղաները, քահանան և բոլոր մեծ ու փոքրը հաւաքել էին քեօխւայի տան սրահումը և նստել ծալապատիկ՝ մեծերը թաղիքների և միւսների վրայ: Արու- թիւնը մօտեցաւ աշղղին համարձակ և գլուխ տալով՝ ասաց.

— Ե՛շխ օլա, ուստա, (աշխուժութիւն լի- նի, կամ կը ցանկամ):

— Եշխն չօխ օլա, սաֆա գեալգն, պա- տասխանեց աշղղը (էշխզ շատ լինի, բարի ե- կար):

Սրանք սկսեցին խօսել թուրքերէն, ևս կը դնեմ այստեղ նրանց ասածների և երգածների թարգմանութիւնը:

Արուժիւն. Պատուելի վարպետ, չի՞ կարե- լի արդեօք, որ մի րոպէ գօտիկ դոտկի դար- կենք, մարիփաթ մարիփաթի (այսինքն փոր- ձենք մեր ուժն ու շնորհքը, բնա մտնելով): Ես լսել եմ քո համբաւաւոր անունը և եկել եմ, որ քեզ հետ բնա մտնեմ. յոյս ունիմ, որ չես հրա- ժարւիլ:

Աշղղ. Գլխիս վրայ, աչքիս վրայ, մեծ ուրախութեամբ, շատ սիրով, շատ սիրուն, շատ բարի... Բայց իմ սիրելի, իմ աչքիս լոյս, ես

տեսնում եմ, որ դու աշղղ չես, դու սաղ չու- նիտ, կամ սաղրդ խլել ես տըւել, ինձ մօտ ա- ռանց սաղի եկել: Ո՛չ, այդպէս չեն լինում ինձ մօտ եկողները, նրանք սաղով են գալիս և ա- ռանց սաղի գնում: Սիրելիս, դու մոլորած ես, ջահիլ ես, քեզ խաբել են: Իմ գիրն այն- պէս գիր չէ, որ ամեն մարդ կարդայ. իմ ջուրն այնպէս շուր չէ, որ ամեն մարդ խմի, ես այն- քան խոր եմ, ինչքան ծովի յատակը, այնքան բարձր, ինչքան Մասիսի գագաթը: Ի՞նչ կա- սես, «*նէ Էալգէ*» (դու լաւը, այսինքն ինձանից լաւը՝ եթէ կարող ես, դու ասա):

Արուժիւն. (Մտքումը). Այս ի՞նչ ճարտար մարդ է. սրան կարելի չէ յաղթել: Ե՛հ, ի՞նչ եմ հոգում, ինչ կը լինի՝ կըլինի. ձու հօ չեմ, որ կոտրւիմ: (բարձր) Գիտես ի՞նչ կայ, վարպետ, դու ճշմարիտ ես ասում, ես աշղղ չեմ. ուզում եմ աշղղ գառնամ, բայց սաղ չունիմ: Քո սաղը իմ աչքումս մտել է. Արի բնա մտնենք, հիմի ինչ կը լինի՝ կը լինի: Եթէ դու կը յաղթես, ես իմ հրացանս քեզ կըտամ, որ «*Ղուիմ — Բախ- չասարայի*» է, երկու հարիւր մանկթով է առ- նըւած: Թող վկայ լինին էս քէթխուղաները: Բայց եթէ կը յաղթեմ, որ Աստուծով յոյս ու-

նիմ, այն ժամանակ, ինչպէս աշըղների օրէնքն է, դու քո սաղը մեծահոգութեամբ ինձ կրտաս:

Աշըղ, Շատ լաւ, յոյժ բարի: Բայց դու աշըղների կանոնը գիտես. դու գիտես, որ սկզբի ասելու իրաւունքն իմն է, որովհետեւ դու ես եկել ինձ մօտ, և ուզում սաղը ձեռքիցս առնել, որ էրազումդ էլ չես տեսնիլ:

Արութիւն. Գիտեմ, գիտեմ, բոլոր կանոնները գիտեմ, կարող ես սկսել:

— Զէ, աշըղիս վախեցրի ասեց արութիւնն իր մտքումը:

Հարցրին մէկ մէկի անուն, աշըղն ասաց, որ իր աշըղական անունը Շոհրայի է: Արութիւնն էլ իր անունը փոխեց, ասելով իմ անունն էլ Քերօբէ է: Արութիւնն իր մահակը սաղի ձևով բռնեց և ծունկ չորեց աշըղի դիմացը: Սկսեցին առաջ ու առաջ խաղով պարծենալ: Բայց որովհետեւ սկզբի ասելու իրաւունքն աշըղինն էր, նա առաջ սկսեց. Արութիւնը պարտաւոր էր հետեւել նրա խաղի «դափայլին», որ նշանակում է դուռն: Աշըղական խաղի բոլոր տները մէկ դռնով պէտք է դուրս գան, այսինքն մի յանգի վերջաւորութիւնով: Արութիւնն ևս պէտք է նոյն յանգի վերջ տալ:

իր տներին, ինչ յանգի որ վերջացնէր աշըղը. եթէ ամ ամ, եթէ ան ան, եթէ աղ աղ, և այլն:

Շ Ո Տ Լ Ա Յ Ի

Ընդունիր ողջոյնըս, աշխոյժ պատանի,
Համարձակ քաջի պէս դուրս արի մէյդան.
Թող չենէ ասպարէզ, ով շնորհք չունի,
Աշըղ անունը տալը նրան չէ արժան:

Ք Ե Ր Օ Ր Է

Կընդունեմ ողջոյնդ, պատուելի վարպետ,
Եւ կըտամ խօսքերիդ մէկ մէկ պատասխան,
Զեմ մնալ քո արջն բթամիտ, անպէտ,
Համարձակ կանգնող եմ քո դէմ յանդիման:

Շ Ո Տ Լ Ա Յ Ի

Կանչել եմ անունը Մշու Սուլթանի,
Որ մարդին նամարդի նա մոհգաջ չանի.
Երևի քաջ լինել դու չես արժանի,
Քեզնից պէտք է խել բո զէնք՝ հրացան:

Ք Ե Ր Օ Ր Է

Քաջ եմ արդեօք թէ ոչ, այդ շուտ կտեսնես,
Երբ ինքըդ բո զէնքից՝ սաղից կըզրկես,

Զուր ասած խօսքերըդ կրկին յետ կառնես,
Կասես՝ մեղայ եմ քեզ, ինչ արիր, համան:

Շ ո Տ Լ ա յ ի

Իմ ոսկեթել սաղին շատերն են հաւնել,
Շատերն են քեզ նման խել ցանկացել,
Բայց իրանք են իրանց սաղիցը զրկել,
Եւ սարսափած փախել մինչև Հնդստան:

Ք ե ը օ ը է

Ես փախչող պտուղ չեմ, բնաւ չըկարծես,
Լաւ կանես, այդ յուսով քեզի չը խաբես,
Գիտեմ որ փախչելու ինքդ սովոր չես,
Բայց հիմա կը փախչիս մինչև Զինաստան:

Շ ո Տ Լ ա յ ի

Դու որ կաս, բմբուլ ես, ես որ կամ, քար եմ,
Կարծում ես, թէ ես էլ քեզ պէս անճար եմ.
Սպասիր, քո արջն մի թակարդ լարեմ,
Որ դու ընկնիս մէջը ճնճղուկի նման:

Ք ե ը օ ը է

Ես թակարդ լարող եմ, թակարդ ընկնող չեմ,
Ինչ ինչ պէտք է ասես, որ ես չըզանեմ,

Բայց քո վըրադ այնպէս մի բար կը դնեմ,
Որ հէնց մնաս տակին այժմ և յաւիտեան:

Այստեղ քեղխուղաները խնդրում են, որ
վերջ տան պարծենալուն և իրանց ինքնագո-
վութեանը, ասելով՝

—Դրան վերջ չըկայ. դու կասես, նա կա-
սի, մինչև որ պրծնէք, Աստուածանից իրեր
խնձոր վէր կընկնի, որ ասենք՝ մէկն ասողին,
մէկը՝ լսողին: Շուտ արէք, թէ բան ունիք
ասելու, ասեցէք, տեսնենք որդի էք յաղթում,
սրբդ չէ:

Շ ո Տ Լ ա յ ի

Դուք շատ էք վաւորում, թող լինի այդպէս,
Սրա պէս պարծեցողին չեմ անիլ անտես.
Աչրդ Շոհային եմ. գիտուն, սրտատես,
Կեանքումս չեմ եղել ցածրողի, անբան...

Ք ե ը օ ը է

Քո բոլոր գիտութիւնդ ինձ վաղուց է յայտ,
Մի նայիր, որ սաղի տեղ ձեռքումս է փայտ.
Անբախտ Քերոբէն եմ, աչրդ եմ անյայտ,
Ո՛հ թէ այսպէս մնամ մինչ օրն իմ մահւան...

Ինքնագոլութեանը, ըստ սովորութեան
հետեւեց հարց ու պատասխանը, որով պիտի
երեւէր յազթույն ու յազթուողը:

Շ ո հ լ ա յ ի

Լսիր, թէ գիտուն ես, ուր քաջ ձեացող,
Այն ուր էր, որ աղբիւր հանեց ոսկորից,
Այն ինչ պողաւոր էր, որ երեսին ունէր քօղ.
Ո՞ր է ծնւել երկու անգամ մօր փորից:

Ք ե ր օ ք է

Ես քո ասածներին կամ պատրաստ լսող,
Սամոնն էր, որ աղբիւր հանեց ոսկորից,
Պողաւոր՝ Մովսէսն էր, որ երեսին ունէր քօղ,
Յօնան ծնւեց երկու անգամ փորերից:

Շ ո հ լ ա յ ի

Ի՞նչ ծառ է, որ անհող, անջուր է բոնում,
Առանց տերեւների ճղներ է գցում.
Ի՞նչ բանն է սուր քան թուր սրտի մէջ ցցում.
Այն ինչ արարած է որ ծնւեց հօրից:

Ք ե ր օ ք է

Բախրի եղջիւրները անհող, անջուր են բոնում,
Առանց տերեւների ճղներ են գցում,

Գառը խօսքն է սրտում սրի պէս ցցւում,
Քո կարծիրով Եւան ծնւել է հօրից:

Շ ո հ լ ա յ ի

Այն ուր էր որ սայլով երկինք վերացաւ,
Սողոմոն իմաստունը ինչ բան չիմացաւ.
Կարմիր ծովը քանի տեղից պատռեցաւ,
Շոհրային եմ շատ լաւ տեղեակ բոլորից:

Ք ե ր օ ք է

Եղիան էր՝ կառքով երկինք վերացաւ.
Սողոմոնն իմ պէսի միտքը չիմացաւ.
Կարմիր ծովում տառներկու տեղ բացւեցաւ.
Քերորէն եմ, շատ ու շատ զոհ այս օրից...

Նօթաթիւ ընկաւ Արութիւնին, որ այժմ
նա հարցնէր և աչրղը պատասխանէր. նա էլ
սկսեց, բայց ոչ թուրքերէն, այլ հայերէն, որ
նոյնութեամբ դնում ենք այստեղ

Ես քո սուտ հարցերը մէկ մէկ լուծեցի,
Չեմ ուզում հետևիլ քո մոլորութեան.
Հենց հիմի մի թիթիւ բան մտածեցի՝
Ո՞ր է հիմքը դրել Հայոց ազգութան:

Շոհրային մ'նաց լուած, սիրթնած, չիմացաւ ինչ էր պատասխանել, բայց քէթխուղաներն ստիպեցին Արուծիւնին, որ նա աւարտէր իր խաղը. նա էլ շարունակեց. —

Եթէ դու գովէիր Հայոց քաջերին,
Մի համբոյր կրտայի սաղիգ սիմերին,
Բայց դու հաւատում ես չինծու բաներին,
Զրգիտես ուրիշներ են Արամ ու Տիգրան:

Քեզ Սուրբ Վարապետը չնորհք է տըւել,
Պարզամիտ ամբոխին սուտ բաներ ասել.
Դու հայերէն անգամ չըզիտես երգել,
Ո՞րտեղից կիմանաս՝ ո՞վ էր Գայլ Վահան:

Ես խեղճ Քերոբէն եմ՝ սարէսար ընկած,
Մնապաշտ հօրիցս զրկւած, հալածւած,
Թէ դու էլ լինէիր ինձ չափ կարգացած,
Կերգէիր անգապար Հայ ու Հայաստան...

— Ելալիւ, ասաց աշըղը, սաղը դնելով
Արուծիւնի արջեր: Արուծիւնը սաստիկ ուրախութիւնից չիմացաւ ինչ էր ասել, արդեօք թեօւօղլի, թէ մի ազգային երգ. յանկարծ միտն ընկաւ իր սովորական բայաթին, որ ամեն ուրախ բոստում երգում էր, և սկսեց երգել —

Աշըղ ըմ, չալ քչեղակ,
Մըհանի կանչիմ քու տեղակ,
Ախճիգ չըմ թա հըմանչիմ,
Տղայ ըմ ծիլ ծիլ կը կանչիմ...

Այս բայաթին մի շատ հին հանելուկ է, Խաչենու բարբառով ասւած. նշանակում է գրած բան, գիրք, նամակ: Արուծիւնը այս բայաթին ասեց ու սաղը վեր առաւ դնաց:

— Էս ո՞վ էր, տղեր ջան, բացականչեց քէթխուղաներից մէկը զարմանալով, երբ որ Արուծիւնն արդէն հեռացել էր բաւականին, ապշութիւն բերելով բոլոր հանգիսականների վրայ: — Էս ո՞վ էր.

— Ճամարիտ, էս ինչ զարմանք էր...

— Էս ինչ հրաշք էր...

— Տեսնես երկնքիցն էկաւ, թէ՞ դեռ նի տակիցը...

— Եարար սատանայ էր թէ հրեշտակ...

— Դա հողեղէն չէր... խօսեց վերջապէս աշըղը, երբ որ ամենքն էլ փոխ առ փոխ արտայայտեցին իրանց զարմացումը: Հողեղէն մարդը չէր կարող իմ ձեռիցը սաղ խել: Ես գիտեմ որ...

— Ուստէն ճշմարիտ է ասում, տղէք ջան, միջամտեց տէր Կարապետը, — բա թամաշա չարիք նրա վառւած էրեսին, կասե՛նայիր Ստեփաննոս Նախավըկայի էրեսն ըլի... Անումն ինչ էր նրա... —

— Քերօքէ...

— Որ ասում եմ., Հաւատացէք, նա հրեշտակ էր, մարդի շոր հագած, էն էլ թուրքի. ախրը սուրբերը չիմ էլ թուրքի շորերով են էրեւում...

— Ստուած դրա ոտն ուղուրով անի մեր գեղի համար. տեսնես՝ ի՛նչ կընշանակի... քօռօնգատի՛ մեր գրքացն էլ ըստի չի, թէ մի գրին մտիկ էր տըւել, տեսնէ՛նք ինչ ա ասում...

— Գրքացն ի՛նչ ա իմանում, թէ հրեշտակի գալն ի՛նչ կը նշանակի, ասեց տէր հայրը. — բայց ես տեսնում եմ, որ հիմի Ստոծու աչքը քաղցրացել ա մեզ վրայ, մեր ազգի վրայ: Բա չըլտեցիք, որ ասեց —

Եթէ դու գովէիր Հայոց քաջերին,

Մի համբոյք կը տայի սաղիւղ սիմերին...
Մեր Գէորգն ու Բաղդասարը հիմի Թիփլիզ են, ընդիմանց գրեր են ուղարկում, որ ես կար-

թամ, դուք անկաջ դնէք, բայց, մեղքս չեմ թաքցնիլ, ալարըս էկել ա, թէ կարթամ: Գրում են, թէ՛ «Ժողովուրդիդ քարոզի...» էլ չեն գիտում թէ Ժողովուրդի գլուխն է՛նքան ա հաստացել, որ մամռնակալել ա: Եդ Քերօքէն՝ ո՞վ գիտէ՝ հիմի նրա համար էկաւ ուստի սաղը խլեց, որ ինձ ղդուչացնի, միտս բերի մեր էրեսոց գրածը, թէ չէ՛ մի օր էլ կը գայ իմ փիլոնը կը խլի... Ուստա, Ստոծով միտի-թարւեա. լաւ է, շատ մի նեղացնիլ սիրտըդ, Ստուած ողորմած է, մի նոր սաղ կառնենք քեզ համար. օրհնեալ լինիս, դու էլ այսուհետեւ հայեար ասա, ինչ որ ասում ես... Հայոց լեզուն Աթամի լեզուն ա, ամեն լեզւից հարուստ, ամեն լեզւից բաղցր: Ես սահաթը մեր Նարեկի նման վիրք ոչ մի ազգ չունի, չունիլի ուրիշի լեզուն աղօթք անելու համար յարմար չի գալի. բայց Հայոց լեզուն է՛նպէս լեզու ա, որ ամեն բանի էլ յարմար ա գալի. կուզես աղօթք արա, կուզես անըծի, կուզես գովի, կուզես փտնի. էլ ի՛նչ ես ուզում... Ուստա, էն ի՛նչ անուններ էր տալիս Քերօքէն. բա դու ասում ես՝ ոչ մի վարդապետ, ոչ մի եպիսկոպոս չի կարող ինձ չափ բան գիտննալ. բա

ինչի՞նչ չը կարացիր պատասխան տալ . . .

— Ես որդիանց գիդենամ, պատասխանեց աշըղը, — քըթաբից սաւահի, մենք ուրիշ գիրք չենք ընդունում: Նահլաթլամա (նզովք) է դրած մեր հին ուստաներից, ես ի՞նչ մեղաւոր եմ: Այբբենի տեղ էլ մեզ արիֆ բէյ են սովորցնում, որ *ալֆաբէ, գաֆա-լլաֆա, զէնջիլլաֆա* խաղերի միտքն ու զօրութիւնը հասկանանք, իմանանք. հիմի որ ես ձեզ ասեմ — «Բէյի, դային, սէյ, օխէլիֆ տըր քեաֆ, թէյինան բէյ», դուք չէք հասկանալ, բայց ամեն աշըղ էլ դաս է առել, գիտէ որ «բէյի, դային սէյ»՝ կընշանակէ՝ Պօղոս. քեաֆ, թէյինան բէյ՝ քըթաբ. (Պօղոսը կարդացել է ս. գիրքը): Եթէ ասեմ՝

«Բիմ սախլադի ջանդա դափ, վով, բէյի, դալ» (ո՛վ պահեց իր մարմնումը որդ) .

Ղափ, վով, բէյի, դալ՝ կը նշանակէ զուրդ, որդ, ճիճու: Ես Յօբ երանելու համար է ասած, չունքի նա իրա ջանումը որդ պահեց. արբեշումի ճիճուն էլ նրա ջանիցը բհամ եկաւ, նրանից առաջ չը կար. . . Էսպէս խաղերը՝ զորդ ա՛ դժար խաղեր են, բայց նահլաթլամա չեն, քըթաբլամա են, չունքի Յօբ երանելին քըթաբի մէջն ա: Բայց որ հիմի Աստ-

ւած ուրիշ թաւուր ա կամենում, «կամք տեառըն օրհնեալ եղիցի», ես էլ իմ աղին (ս. Կարապետին) կը խնդրեմ, որ ինձ ուրիշ չնորհրտայ: Դէ մեր տէրտէրն էլ դու ես. դու մեր հայոց քաջերի պատմութիւնն արա, ես էլ նրանց գովեմ, բարձրացնեմ. . .

— Ես աշըղ հօ չեմ, որ քեզ խաղ սովորեցնեմ, պատասխանեց տէրտէրը, որպէս թէ լաւ չը հասկանալով աշըղի պահանջը:

— Բեզ ո՛վ է ասում ինձ խաղ սովորցրու, խաղ ես ուզում, ես կը սովորցնեմ քեզ: Դու վոնց որ ամեն օր Այսմաուրքը կարդում ես, մենք ականջ ենք դնում, էնպէս էլ Հայոց ազգի քաջ տղամարդոց պատմութիւնը կարդա, մենք ականջ դնենք: Ա՛յ, ինչ եմ ասում. ես քեզանից խաղ չեմ ուզում:

— «Կարդա» . . . «ականջ դնենք» . . . Ես որդիանց կարդամ, ինձ կարդացրել են, որ ես կարդամ. . .

— Դէ ասա՛ չեմ գիտում, էլ ի՞նչ ես կըմկըմացնում. դու որ տէրտէր ես, չես գիտում, ես որդիանց կը գիտենամ. էլ ո՛ւր ես վրաս ծիծաղում. . .

Թողենք տէրտէրին ու աշըղին, որ իրանց

վէճը շարունակեն, մինչև մի խելքը զլխին մարդ դուրս կը գայ և կը որոշէ, թէ նրանցից ո՞րն է մեղաւոր և ո՞րն արդար, իսկ մենք գնանք Արութիւնի մօտ:

Արութիւնը հեռացաւ գնաց, մտաւ մի բարայր, և սկսեց փորձել, որ տեսնէ կարող է ածել սաղը թէ ոչ: Սպասեցէք, շրջաւայրնում է աշրդների եղանակներից և ճնկճնկացնում սաղը, բայց չի կարողանում ներդաշնակութիւն ձգել քոլոր թելերի մէջ, չի իմանում, թէ մատը ո՞ր փարդի վրայ պէտք է դնէ:

— Զէ, չի լինում: Եւ սուրբ Կարապետ, չանդլի սուլթան, չանդլի փիր... երգեմ, երգեմ, երգելով լաւ դուրս կը գայ...

Թորդանէն եփրատ բերին, Մշու սարին հաւանեցար, — Բանիւ ջորու ծնկնովն մեղ դարմանք հրաշք ցուցար...

— Զէ, չի ըլլում, սուրբ Կարապետը չի օգնում... ուրիշ երգ երգեմ...

Քրիստոնայ էք, անգամ կալէք, լսեցէք,
Լաւ իմացէք պտուիւրանն Աստուծու,
Մաթոս, Մարկոս, Դուկաս, Ուհան գրեցին
Չորս կլօխ Աւետարանն Աստուծու:

— Զի լինում, չէ... վերի սիմերը շատ են թուլացել, պէտք է սրանց ստներին մի քիչ հուփ տալ, որ հաստ ձայն չը հանեն... Ահա... կտրուեց սիմը. հիմի ես ինչպէս չի-նեմ: Բայց լինչ վնաս ունի, մէկ սիմն էլ պակաս լինի թող. միւսը փորձենք: Օհ... այս էլ կտրուեց. բայց այս ոտի վրայ դեռ շատ կայ փաթածութեամբ. տեսնեմ հասնում է... Ափսոս, կարճ է: Ե՛հ, մի նոր ցաւ գտայ ինձ համար. մինչև ես սրա հետ կը հաշուիմ, աշրուս մազ կը բսնի: Մէկ ասող լինի, թէ սաղը քո ինչլին էր պէտք, որ վերցրիր բերիր, խեղճ աշըղին էլ առանց սաղի թողեցիր: Յաղթեցիր, բաւական է, էլ ինչ կանէիր սաղը: Զշմարիտ, ինչ պէտք է անեմ ես էս սաղը. տանեմ էլ յետ իրան տամ, ասեմ *ան*, վարպետ ջան, քո սաղն ինձ պէտք չէ... Բայց չէ... յետ գնալը լաւ չէ, ո՞վ դիտէ ինչ կարող է սլատահել: Ես դիտեմ ինչ կանեմ այս սաղը: Ես սրան կը տանեմ Զալալօղլի կը ծախեմ, ստացած փողովս գնեմ ու վաճօղ կտնեմ... Իսկ հիմա կերթամ էս մօտիկ փռանգների գեղը: Այս խեղճ կաթօրկները չեն իմանում, որ իրանք հայ են, գրանց պէտք է հայացնել:

Հէնց որ հասկացրիր, թէ ազդ առածդ ինչ բան է, էլ այնուհետև ինչ պատճառ ունին չը միանալու մեզ հետ: Յիմարները իրանց տունը քանդում են, որ ուրիշ ազգերի տները չինեն... Վեր կենամ զնամ... Այսօր նշանաւոր օր է ինձ համար... Յաղթե՛լ. հեշտ է ասելը: Աշըղին յաղթելը մի պատուհաս է, ամեն մարդի բան չէ: Բայց ինչ կը լինէր իմ ճարը, եթէ դժար դափիով էր սկսել. ինքն առաջուց պատրաստած կը լինէր, ես կը մնայի կապ ընկած: Մէկ զրանց ասող լինի թէ՛ ո՛վ յիմարներ, ոտանաւոր էք ուզում՝ գրեցէք, երբ էք ուզում՝ շինեցէք, էլ դափիւմս որն է: Մարդ իմանայ, ո՞ր ժամանակից է այդ ձեռ մտել մեր մէջ, կամ արդեօք հայի հնարած է, թէ հետևողութիւն է ուրիշ ազգի: Ի հարկէ սա մի հետևողութիւն կը լինի, հայն այնպէս յիմար բան չէր հնարիլ, սա արարացու բան է, էն գուր էլ աշըղների հին խաղերը բոլորն էլ արարերէն է... Մէկ ինձ ասող լինի, թէ դու ինչ տեղից գիտես. ինչի ես խելքիդ զու տալիս, կարելի է թէ փարսերէնն էլ է այդպէս. միթէ քիչ խաղեր կան փարսերէն... Ձէ, այս ոչ որ չի իմանալ. եթէ ոչ՝ պարոն Հախովեր-

գեանն էլ կիմանար, որ այս մասին ոչ մի խօսք չի ասել և գիտութեամբ թէ անգիտութեամբ լուել է, եթէ ոչ՝ ինչ կը նշանակէ՝

«Սայաթ-Նովա գերեզմանն Հինգ, Հաբաշ, Աբաթ մի անի: Այդ միևնոյն է, եթէ ասէր՝ Սայաթ-Նովա գերեզմանն հուն, զըկեռ, «Աբաթ մի անի, կամ՝ «ճոն, գերձիկ, գաաթ մի անի»...

Ո՛վ որ աշըղի դափիի նշանակութիւնը չի իմանում, Սայաթ-Նովի սեւ արաբը նրա աշըղն չի երեւում, կամ կարծում է, թէ բանաստեղծը գրանով մի մեծ միտք է ուղեցել յայտնել, մինչ գեռ նրան՝ դափիի համար՝ պետք է եղել աթ վերջաւորութիւնով մի բառ, նա էլ գրել է «Արաբ» հինգն ու հաբաշն էլ առաջից չարել, որ արաբը մենակ չը մընա, մեծ մեծ բառեր, մէջը դատարկ Աշխարհքումս մենակ աշըղները չեն մոլորւած, հէնց ամենքն էլ մոլորւած են: Բայց ինչ կը նշանակէ մոլորւած. միայն ես եմ մոլորւած, որ չը գիտեմ, թէ ինչ եմ անում, ինչի եմ ման գալիս ու մինչև երբ պիտի այսպէս աննպատակ թափառեմ, չըլինի՞ թէ ճշմարիտ՝ ես խելագարւած եմ, բայց ինքս չեմ գիտում,

չեմ հասկանում . . . Գնամ գնամ այդ զիւղը, կարելի է թէ ինձ այդտեղ վարժապետ եմ շինում եւ ինչ զարմանալու բան կը լինի: Եթէ կորցրած էջեր պտորոզ Սաւուղը կարող էր թաղաւոր դառնալ, ես ինչո՞ւ վարժապետ չեմ կարող դառնալ, որ կորած էջեր չեմ պտորում, այլ խելքը զլխին մարդիկ: Գրեամ, գնամ, Աստուած ողորմած է, եւ ողորմած է չափից գուրս, անսահման ողորմած է: Նրա համար մինեւոյն է խելօք է մարդը թէ յիմար, կամ մարդ է, թէ կատու: Նա իր ողորմութիւնը հաւատարապէս տարածում է բոլոր արարածների վրայ: Եթէ այդպէս չը լինէր, էլ բարբարի վրայ չէր կանգնիլ: Բայց ես մոլորուածս՝ ուզում եմ որ ինձ վրայ Նա մի առանձին ուշադրութիւն դարձնի. չէ որ հարկւր ոչխարի միջից տէրը միայն մոլորւածին է փնտրում . . . Բայց այս աստ, թէ էս ոչխար հօ չեմ: Եթէ այդքանը խելքս կտրում է, կը նշանակէ Աստուած իր անելիքն արդէն արեւ է» . . .

Առանձնութիւնը եւ վայրենացնում է մարդուն եւ փիլիսոփայ է շինում: Արութիւնը չէր վայրենանում, նա կարող էր մի նորատեսակ փիլիսոփայ դառնալ, եթէ թոյլ տար նրան իր տաքարիւն խառնւածքը: Նա շափաղանց դիւրադրդիւ, շափաղանց դիւրագգաց էր փիլիսոփայութեան համար: Նրա բոլոր դատողութեան մէջ փիլիսոփայութեան հոս ու նշան չը կար. նրա բոլոր ուղիղ կամ խելօք ասած բաները մի սրտի փղծուկ էին, կիրք դարձած զգացողութեան արտայայտութիւն: Այդպէս էր կազմակերպւած նրա անհատականութիւնը, նրա հոգու առանձնաշատկութիւնը:

Արութիւնը սաղը թաքցրեց քարայրի մէջ, իսկ ինքը գնաց մօտակայ փռանդների զիւղ՝ Շարչարեւո: Գեղամիջովն անցնելիս մի մարդ տեսաւ, որ տանն կտրին կանգնած՝ ծըխում էր երկայնակի ծխամորճը (չիբուխ): Արութիւնը նրան մի քանի անգամ տեսել էր իրանց տանն իջեանաւ եւ գիտէր որ նա Բարսեղ քեահեան էր, մի պատուական եւ հիւրասէր մարդ, որ բառասուն տարի շա-

բունակ քեահիւլթիւն էր արել: Արութիւնը մօտեցաւ նրան և Բարսեղ քեահեան խօսոյն ճանաչեց նրան: Նա չէր իմանում, որ Արու-
թիւնն իրանց տանից խռոված էր. նստեցրեց մօտը և հարցրեց թէ «ինչպէս էր Աւետիք եղբօր քէֆն ու հալը» և երբ խօսք ընկաւ Արութիւնի մասին, նա պատասխանեց, որ այդ մասին յետոյ կը խօսի նրա հետ:

Արդէն երեկոյեան ժամասացութեան ժա-
մանակն էր: Գիւղի ծխատէր քահանան դուրս եկաւ տանից, երկայնակիւթ չիբուխից մի թանձր ծուխ բարձրացնելով՝ նայեց արեգա-
կին, տեսաւ որ դեռ կարելի էր մի փոքր սպասել, քայլերն ուղղեց դէպի Բարսեղ քեահեան: Տէր հայրը դեռ շատ հեռու էր, որ Բարսեղ քեահեան ոտքի կանգնեց, մի փոքր սւշ՝ նրան հետեց և Արութիւնը:

Տէր հայրը նստեց նրանց մօտ մի քարի վրայ և Արութիւնին թուրք հովիւ, ուրեմն և գող, կարծելով, ասաց Բարսեղ քեահեային.

— Զօ Փարսեղ, ասիդ ձերգից է, Քափա-
նագու չօբան է հէ՛ Զօ աղամ, մեղի
զիան մը չենէ՛ . . .

— Զէ, տէր խայր, խայ է, Խաչնւայ է.:

— Խողարած է, հէ՛.

Ի՞նչ գըսես զը, աղիկ կարգալ գլինայ,
մերին Աւագիւր ախարօր մանչն է . . .

— Ըզնրտ գըսես զը. ձօ մանչիկս, ձւր
կերթաս զը . . . :

— Ես այստեղ եմ եկել, տէր հայր, ու-
րիշ տեղ չեմ գնալու: Ես լսել եմ, որ դուք
ուզում էք ուսումնարան բանալ ձեր գիւ-
ղումը, բայց վարժապետ չունիք. ես կարող
եմ վարժապետ լինել, եթէ կը կամենար և
կընդունիր:

— Աղանդ իշտէ՛ . . . Եզնեւու պան մը
չըսիր . . .

— Ինչո՞ւ համար.

— Քուզին միտքն ինդոր է, դու խայ
ես մենք զաթօլիկ, աղիկ ի՞նչ ըսել է. «Ե-
զուր քըզի խայ ընեմ» գէյի ըսել չէ՞ մի . . .
ֆիռանդին ու խայուն մէջ միապանուտէն կեդնի
հէչ:

— Ինչպէս թէ՛ «Եզուր խայ ընեմ քզի» .
միթէ՛ դուր հայ չէ՛ք, նոր տիտի հայացնեմ
ես ձեզ. դուք որ ձեր անունը փրանի էր
գրել, հենց իմանում էր թէ՛ փռանդսուղ էր
դառնէ. ձր փռանդսուղը կը յիմարանայ՝ իր

աղղութիւնը չըճանանչել և իր աղղային կրօնը մի օտար կրօնի հոգաթափ շինել։ Վերջապէս ես կրօնի վարժապետ չեմ, ձեր կրօնը դուք ինքներդ էլ կարող էք սովորեցնել, Բայց եթէ դուք ձեր աղղութիւնը չէք ուրանալ, աղղութեան չէք լինել, ես կը սովորեցնեմ ձեր սրբոցը Հայոց աղգի պատմութիւնը։ Գիտութիւն էլ, որքան ես ունիմ, բոլորն էլ կը հաղորդեմ նրանց դիւրին ոճով. վերջապէս ուսում կը տամ, գրել կարգալ կը սովորեցնեմ ։ . .

— Խայոց բառմուտէն որի՞ն գըսես գը, խին դաբաշտներու խմար գըսես գը։

— Սյո, հին կռապաշտների, բայց սրոնք աւելի առարկինի, աւելի հայրենասէր և աղնիւ մարդիկ են եղել, քան թէ այժմեան հայերից շատերը, սրոնք թէպէտ կռապաշտ չեն, բայց պապապաշտ են, որ կռապաշտութիւնից էլ ստոր քան է։ Վերջապէս հին հայերը հօ միշտ կռապաշտ չեն եղել։ Մեր Արդար թագաւորի ժամանակից սկսած հայերը խաչապաշտ դարձան Թադէոս և Բարթոլիմէոս առաքեալների քարոզութեամբ և վերջը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի։ Ես այդ բոլորը կը պատմեմ։ Ես այն էլ կը պատմեմ, թե ինչ

պատճառներից, ինչ հանգամանքներից ստիպւած՝ և ճրպիսի որոմնացանների չնորհիւ մի և նոյն աղգի, մի և նոյն եկեղեցու հարազատ սրբիքը բաժանել են միմեանցից և այժմ իրար խորթ հղբայր անգամ չեն համարում և փոխադարձաբար իրար աւելի են ատում քան մի բոլորովին օտար և մինչև անգամ չբրիտտոնեայ աղգի։ Սյո բռպէխս դուք ամօթ էք համարում և մինչև անգամ մեղք՝ ձեզ հայ անւանելու, և չէք զգում, որ դա մի հայրութեան թիւն է . .

Տէրութիւնը նկատեց, որ Արութիւնը վրտանգաւոր քարոզիչ չէ, որովհետեւ գիթ է, ուշ չը դարձրեց այլ ևս նրա խօսքերին և մի աւելի խոհեմ մարդու գիրք բռնելով՝ վեր կացաւ գնաց ժամ։

Բարոնդ քեահեան Արութիւնին տարաւ իր տուն, ուր ներս մտան թէ չէ, աղջկէքն ու հարսները տանուտիրոջ ակնարկութեամբ համբուրեցին Արութիւնի ձեռքը, կատարելով իրանց հիւրասիրական սովորութիւնը։

Ընթրիքից յետոյ Արութիւնը բարկացած լինելով տէրտէրի վրայ՝ սկսեց հայ կաթոլիկների մոլորութեան գէմ շատ բաներ ասել և

բարոյեղ Բարոնդ քեանային ազգութիւնս
Բարոնդ քեանան, որ մոլեռանդ մարդ չէր և
սերա լարեկամութիւն ունէր շատ լուսաւոր-
չականներին հետ, համակրում էր Արութիւնի
բոլոր ասածներին՝ տաքարիւնութեան վերա-
գրելով նրա համարձակութիւնը քան թէ գը-
ժութեան, բայց ոչինչ չափեց, բացի այս մի
խօսքից, թէ՛

— Քուգին ըսածը բիութիւն ջշմարտու-
տէն է մա՛ ինչ պիտ էնէս օր՝ գարբաւորնիս
առաջնիս կըփաղեն գը, իշտէ ինքդ ալ գը
դեմնես գը . . .

Արութիւնը մտրումը գրաւ, որ էլ այ-
նուհետև ոչ ոքի չը յայտնէ որ ինքն այբբին
գիտէ։ Լաւ համարեց, որ իրան մի չօբան
կամ աւազակ կարծեն, քան թէ դիժ կար-
դացող։ Բայց այսուամենայնիւ նա չզգաց, որ
ինքը մի նոր միտք քարոզելու կերպն ու ձևը
չըգիտէ։ Նա ոչ տեսել էր և ոչ լսել, թէ
ինչպէս են վարւում և ինչպիսի ոճով խօ-
սում նոր միտք, նոր ուսմունք վարդապե-
տողները, գիտենար էլ՝ դարձեալ չէր նմանիլ
նրանց, հակառակ լինելով այդպիսիներին թէ
համոզմամբ և թէ բնաւորութեամբ։ Նա մի

ջերմեռանդ Աստուածաւէր էր։ Նա Աստու-
ծուն ներկայացնում էր իրան Նարեկացու
պէս, անսահման բարի, անսահման ողորմած,
և ոչ նախանձոտ, բարկացկոտ, ինչպէս Մով-
սէսն էր ներկայացնում։ Բայց շատ էր ցան-
կանում, որ Աստուծ նախանձոտ և բարկաց-
կոտ լինէր, վրէժխնդիր լինէր, իր փառքն
ուրիշին չը տար. սակայն խոր մտածելով՝ ա-
սում էր. «Եթէ այդպէս լինէր, քար քարի
վերայ չէր կանգնիր»։ Նրա բնաւորութիւնն
այնպէս էր կազմակերպւած, որ ինչ բովով
էլ անցնելու լինէր նրա ուղեղը, նա կը մնար
մի ջերմեռանդ աստուածապաշտ. Աստուծ նրա
ամենաբարի Հայրն էր, առանց նրան ինքը
ղինքը որը կըղղար, զուրկ այն անսահման սիր-
ուց, որ խոր զգացողին մի անմահական կեանք
է տալիս, նրա երևակայութեանը մի արագ
ոլացումն դէպի վեր, վեր, դէպի անհունու-
թեան ծայրի աշխարհը, (զոր ակն ոչ ետես,
ունին ոչ լըւաւ և սիրտ մարդոյ ոչ անկաւ . . .
Զգացող սիրտը, երևակայող միտքը միտենդ է
պահանջում, միտենդ է փնտրում և գտնում է
միշտ՝ յիրաւի՝ այնպիսի բաներ, որ ոչ աչքը
կարող է տեսնել, և ոչ ականջը լսել . . .

Առաւօտը վաղ վեր կացաւ Արուծիւնը
և մի տար տար թանէսպաս խըպըշտելուց
յետոյ, ճանապարհ ընկաւ դէպի Ջալալօղլի:
Այդ տեղ ծախեց նա իր ձեռք բերած սաղը
և նրա գնով բաւական գնդակ ու վառօդ
գնեց և ընկաւ Լօռայ ձորերը: Բայց ինչո՞ւ
համար ի՞նչ նպատակով, ինչի՞ց ստիպւած, այդ
հարցմունքները նա ինքն իրան չէր առաջար-
կում, բայց կարծես մարդկանցից, աշխարհից
փախչել էր ուզում և միայնութեան մէջ էր
գտնում իր միակ մխիթարութիւնը, զըւար-
ճութիւնը: Իւրաքանչիւր բայլտիօսում նա
իր ուշադրութիւնը դրաւ մի բան էր տես-
նում, և այսպիսով նրա միտքն ու երեւակա-
յութիւնը անընդհատ զբաղուած էր լինում,
մանաւանդ երբ մի որսի հետք էր գտնում
և սկսում էր նոյն հետքով գնալ: Որսի
հետքը նրան անց էր կացնում բաւական մեծ
տարածութիւն, առանց յոգնեցնելու, մինչև
որ կամ գտնում, ուզանում էր, կամ հետքը
կորցնում և մի ուրիշը փնտրում: Որսորդու-

թիւնը մի զարմանալի գրաւող բան է, որ
շատերի մէջ հարբեցութեան և թղթամոլու-
թեան պէս մի բան է դառնում, էլ ձեռք
վերցնելու հնար չի ունենում: Արուծիւնի
երակները արիւնով լցուել էին, նրա մրկա-
նունքները զարգացել, նա չարժուութեան
կարիք էր զգում: Այսպէս մենակ մի քանի
օր թափառելուց յետոյ, մէկ օր էլ Մարցայ
անտառներումը հանդիպեց արտաքին կերպա-
րանքով իր նման մի որսորդի, կամեցաւ մօ-
տենալ նրան, բայց անձանօթը հրացանը
Արուծիւնի դէմ բռնելով՝ ասաց.

— Քիմ սան, եախըն գեւալմա (ձի ես,
մօտ մի գար):

Արուծիւնին որսորդների զգուշութիւնը
յայտնի էր. անձանօթի հայի կերպարանքը
տեսնելով՝ ասաց.

— Նս թուրք հօ չեմ, ի՞նչ ես թըւանքդ
դէմ անում վրէս, ես հօրսկան տղայ եմ,
հօրսի եմ ման դալիս...

— Հա մ . . . դէ որ հայ քրիստոնեա
ես, լաւ ա . . . Ո՞րդիանցի ես, անումդ ի՞նչ
ա, — հարցեց անձանօթը մօտենալով Արու-
ծիւնին:

— Խաչընեցի եմ, անուամս Արուծին աս.
դմբ ուղիանցի ես, քու անուամս ինչ աս...

— Ես էլ Դսեղեցի եմ, անուամս Պօղոս աս,
Մի բանի այսպիսի լակնական հարց ու
պատասխան իրար տալուց յետոյ մեր հայ
սպարտացիքը մօտեցան միմեանց և նստեցին
իրար կողքի, որ հանդուտանան:

Պօղոսն Արուծինի կատարեալ հակա-
պատկերն էր. նա մի մարմնացեալ կոստու-
թիւն էր՝ գազանի բնաւորութեամբ, բոլոր
զգացումները գազանային էին. նրա ապշու-
թիւնը, զարմանքը, բացականչութիւնը, բար-
կութիւնը, ոգևորութիւնը բոլորը բոլորը
գազանային էին, խելքի կառավարութիւն,
տիրապետութիւն չր կար նրա զգացմունքների
վրայ: Բայց այսու ամենայնիւ, իբրեւ ընկեր՝
չատ լաւ ընկեր էր, որովհետեւ որտոտ էր,
քաջ էր: Նա ընկերոջ համար զլուսը մա-
հու կը տար, երբ տեսնէր նրան նեղ տեղ
ընկած: Երբ որ տեսաւ, որ Արուծինը մի
օտարական է, առաջարկեց նրան իր մօտ
գնալ, իր տանը մնալ որքան կամենում է և
իր հետ գնալ որսի: Արուծինը յանձն առաւ
և տուն վերադառնալիս մի եղնիկ սպանեց,

որով ցոյց տաւ Պօղոսին իր ճարպիկութիւնը
և բարձրացրեց նրա աչքումն իր հեղինակու-
թիւնը, որովհետեւ գնդակը զիսցրել էր եղ-
նիկի ճակատի եզրից մէջ տեղը, որ ամեն ու-
սորդի բան չէր...

Արուծինը Պօղոսի հետ ընկերութիւն
արաւ մի բանի ամիս: Թէ ինչից դրաւած՝
այդբան մնաց, այդ հանգամանքն ուրիշ բանի
կարելի չէ վերագրել, այլ միայն որսամուլու-
թեան: Մի քանի տեղ թակարդ էին լարում
ձմեռ ժամանակ, և սպասում էին, որ
նրանց մէջ պիտի ընկնին մազաւոր կենդանիք
— ալւէս, գալա, լիսամ և մինչև անգամ
գայլ. խրամների անմատչելի քարածերպերում
փնթակ էին դնում և սպասում էին, որ
նրանց մէջ պիտի մտնեն տանը ձագ տաւած
փախած մեղսւնները. նրանց գնալ՝ մտիկ տալ
կուգէր, և գնում մտիկ էին տալիս, որ եթէ
յաջողւած էր լինում, վեր էին առնում,
տանում տուն, խոկ եթէ ոչ՝ ընկնում էին
որսի ետեւից երբեմն միասին և երբեմն ջոկ
ջոկ: Պօղոսն անտառի մարդ էր, որովհետեւ
որոտրդութիւնը նրա համար մի երբեմնական
զըլարճութիւն չէր, այլ արհեստ: Նրա բոլոր

հարստութիւնն էր իր մի հատիկ կողք, երեք հատ դամբա շները, որոնցով շատ անդամ արջ և վարազ էին որսում, և երեսուն թէքառասուն փեթակ մեղուն: Նա շունէր ոչ հայր, ոչ բոյր և ոչ եղբայր, այլ մի մայր միայն, որ մի կատարեալ կմախք էր: Այդ չորութիւնը առաջ էր հիկ կսկծից: Վեց որդի էր թաղել մին քան զմիւսը գեղեցիկ և քաջ. ամենքն էլ մեռել էին որը նոր նշանած, որը նոր սլաքիւած: Նա ամեն երեկոյ նախատում էր Պօղոսին, որ ձեռք վերցնէ որսորդութիւնից, վար ու ցանք անէ, տաւար սլահէ, բայց գաղանաբարոյ Պօղոսը սիրով սլատախանել կամ խոստումներով սիրաշահել շունէր, այլ խանչալով էր խօսում մօր հետ, ասելով՝

— Լեզուդ մ'անիլ, թէ չէնա՞ կս սհաթիս փարշափարա կանեմ: Բայդուշ, հօբըս գլուխը կերար, ախաօրցս գլուխը կերար՝ հերիք չի, հիմի էլ իմ գլուխն ես ուզում ուտի...

Կսկծաչոր մայրը վախենալուց՝ ցածրացնում էր ձայնը և սգում: Արութիւնի սիրտը թէև արիւնիով լցւում էր ամեն անգամ

այս տեսարանին 'ներկայ լինելով' բայց ոչինչ չէր խօսում, չէր յանդիմանում Պօղոսին, որ ըստ երևութին անգթութեան մէջ նրանից յետ չը մ'նար: Սակայն առանձին եղած ժամանակ միշտ մխիթարում էր սլառաւին և յոյս էր տալիս, որ Պօղոսը կը լաւանայ, միշտ էնպէս կողկտ չի մ'նալ: Պառան էլ Արութիւնին համաբելով իւր միակ մխիթարիչը, Պօղոսից առաւել նրան էր մայրութիւն անում: Սակայն մէկ օր էլ, երբ Պօղոսն իր կոստուլթիւնը ծայրայեղութեան հասցրեց և մայրն սկսեց հրեխայի պէս հեկեկալով լաց լինիլ, Արութիւնի սրտի վրդովմունքն այնքան սաստկացաւ որ աչքերից արտասուք եկաւ: Չուզենալով Պօղոսին ցոյց տալ իր սրտի քնքշութիւնը, դուրս եկաւ տանից և արտասուքն աչքերին նստեց մէկ տեղ և արտայայտեց իր սրտի վիշտը հետագայ խօսքերով —

Արցունքն աչքերին, կարկառած ձեռքով՝
մօրըս կմ տեսնում,
Թէ երազիս մէջ, թէ լոյս ցերեկով, մը-
տածմանց միջում,
Ո՛հ, մայր իմ, մայր իմ, միթէ արժե՞մ
ես այդ կսկծանքին,

Այդ անշտի սիրոյն և երանական սլա-
րաստ գլւանքին,
Ես չեմ ուրեմն մի դժբախտ էակ մոռց-
ւած ամենքից,
Քանի որ ունիմ անսահման սիրով ինձ
վիճակակից:
Թող ողջ աշխարհը ինձ արհամարհէ,
հող չունիմ բնաւ,
Ինձ բաւական է քո միակ սէրը և
գութը անբաւ:
Ո՛հ, թէ ինչ յուսով և ինչ վափաքով
ինձ սնուցել ես
Քանի՜ օրերով ծոմադահուլթեամբ կեան-
քըդ մաշել ես,
Քանի՜ շարաթներ սլասով, աղօթքով
Աստուած ես կանչել,
Քանի՜ սուրբի մօտ մոմով, մատաղով
ուխտ ես զնացել,
Քանի՜ որբերի և աղքատների դու կե-
րակրել ես,
Քանի՜ աղօթքներ և թալիսմաններ վե-
րառ կարել ես,
Քանի՜ ցրտ անդամ դու իմ փոխանակ
հարւած ես ստացել

Սնդուլի ձեռքից և քանիցս անգամ
դառն արցունք թափել,
Որ ես բախտաւոր մարդ գառնամ մի
օր և չնորհալի,
Որ լինիմ սլարծանք աղգակիցներիս և
բեղ սիրելի
Բայց ես . . . մի՞նասլաշտ հօրքս չնոր-
հիւ ընկայ սարէ սար,
Վերադառնալու, նորից ապրելու փրկա-
րում եմ հնար.
Բայց իմ յոյսն արդեօք Աստուած . . .

Ո՛վ . . . Աստուած իմ. Աստուած, Դու
բարի ես, Դու միշտ ողորմած.
Շատ ժամանակ է, որ Քո վթովթիւնդ
երբէք չեմ յիշած.
Ներիր ինձ, ներիր, Հայր իմ Արարիչ,
ես մեղաւոր եմ,
Դու ինձ չնորհել ես ուժ ու զօրութիւն,
ես մոռացել եմ
Դու հրամայել ես լինել զործունեայ ես,
նոր եմ յիշում,
Ես այսուհետեւ զործող կը դառնամ իմ
բոլոր կեանքում

Գործունէութեամբ իմ մէջ կը գտնեմ եւ

ինձ բարեբար,

Գործունէութեան դէմ չը կայ ոչինչ ան-

հաս և դժուար.

Թող այս ձեռներըս, որ այժմ քաջա-

ռողջ՝ պարագեն գործով,

Թող այս ճակատը, որ այժմ լայնացած՝

ճոխանայ մտքով.

Թող այս ոտներս, որ այժմ ամբացած՝

ուղիղ ընթանան,

Թող այս աչքերըս, որ այժմ բացւած՝

նոր փայլ ստանան.

Յօժար եմ, յօժար, ամենայն անձամբ

գործունեայ լինել,

Հաստատուն յուսով, անվհեր որսով

միշտ յառաջ դիմել,

Դէպի նպատակ — դէպի կատարեալն և

դէպի բարին,

Որին ձգտելը մի անհրաժեշտ պարտք է

մարդկային...

Դու մի հաստատուն, ու մի Արարիչ,

կամք տուր ինձ միայն,

Իսկ քիզ վայել է միայն փառք պատիւ

այժմ և յաւիտեան...

Մ

էկ անդամ Արութիւնն ու Պօղոսը
մի եղջերու սարանցին, երկուսի գնդակն էլ
դիպել էր: Արդէն երեկոյ էր և տունը հե-
ռու և իրանք էլ յոգնած, այս պատճառով
նոյն գիշերը մնացին մի աւերակ եկեղեցում:
Կրակ վառեցին եկեղեցու մէջ տեղը և սկսե-
ցին եղջերւի մտի փափուկ տեղերից փայտէ
շամփուրներով խորովել, ուտել և մի և նոյն
ժամանակ խօսել որսորդութեան, այս և այն
վայրենի կենդանու բնաւորութեան մասին, թէ
ինչպէս որձ եղջերուները սեպտեմբերից սկսած
յուլի տալով գրմբացնում են բոլոր անտառ-
ները և կանչում են կովերին, թէ ինչպէս
կատաղութիւնից կուրանում, անխելքանում
են, թէ ինչ կատաղի կռիւ է սկսում բոլոր
որձերի մէջ և կովերն ընկնում են յաղթողի
ճանկը: Սրանց այս տեսակ նկարագրութիւնից
երևում էր, որ որսորդները թէև կռաւիտ,
խիստ նուրբ կերպով ուսումնասիրում են
վայրենի կենդանիների ամեն մի շարժումը,

Նրանց բնաւորութիւնը:—Այս ժամանակները, ասում էր Պօղոսը, որ աւելի փորձւած էր այդ բանում քան թէ Արութիւնը, բոլոր որձերը գնդակահար կը լինին, եթէ կովերը չազատեն նրանց: Որձերի աչքերը արեւնով լցած է լինում, էլ ոչինչ չեն տեսնում, բայց կովերն իսկոյն նրանց բռնելով, իմաց են տալիս վերահաս վտանգը և փախչելով փախցնում իրանց ետից հարբած որձերին՝ բուլաներին . . .

Այս տեսակ խոսակցութիւնը բնականապէս հասցնում էր մինչև աղջկէրը, որոնք նոյնքան դժոյշ են, ինչքան վայրենի պախրի երինջները. և խօսում էին այս և այն աղջրկան վերայ:

Լսենք, տեսներ ինչ են խօսում մեր քաջ Հայկայ թոռնիկները:

— Արութին, ասում են՝ պախրայ սպանիլը մեզր ա. զորդ ա, էս միսն ուտում եմ, ամա սիրտս ասում ա՝ լաւ չես արել . .

«Ամենայն տեղ նախապաշարմունք» ասում է Արութինն ինքն իրան բայց չըմպի տելը գնելով՝ հարցնում է.

— Ընչի ա մեզր, Պօղոս.

— Ասում են Քարամն անիծել ա:

— Հա . . . դէ հըմի վննց անենք, սպանել ենք պրծել, էլ հօ չի սաղանալ: Ես չատ եմ սպանել, Պօղոս, իսկի մեղքս չի եկել. . .

— Տօ ես բիշ եմ սպանել . . . Որ գալիս ա գիւլիդ աղաքին կաղնում, Քարամն էլ ես մոռանում, բանն էլ. հենց որ սպանում ես պրծնում, նոր ա Քարամի անէծքը միտքը ընկնում: . .

— Պօղոս, ես էն Քարամի անէծքը գիտեմ. . .

— Ի՛նչ ա ասում . . . Քէ մատաղ, Արթին ջան, հլա մի ասա տեսնեմ ի՛նչ ա ասել:

— Ասել ա՝

Սափար այլն ծնդօրթընդա, բէշնդա

Բու դաղդա բիր մարալ սըղղար, աղլար,

Ուղալս դայիլ, բու դըր Բին-գեօլ բաշնդա,

Բու դաղդա բիր մարալ ան էդար, աղլար. . .

Քէ մատաղ, Արութին ջան, մի ձէնով ասա, ձէնով. . .

— Դէ անկաջ դիր.

Օւչի՛ դեօրըմ՝ դուռիաթընի արթմասըն,

Քիփրիդ զոյուփ քիփրիդ ուստա չաթմասըն. . .

ը . . . ը . . . ը՛ն . . .

Ղասար օլան մարալ աթի սաթմասըն,

Բու դադտա բիր մարալ սըղըլդար, աղլա...
ա . . . ա . . . ա . . .

ա...էյ...հարալին ջանը...ը...ը...ը...մ...
ախ...աղիզը...ը...ը...ը...մ...

— Բահ, ձէնիդ մատաղ, Արուծին, լա-
ցըս էկաւ ... Եանի էլ ընչի էր անըծում էդ
օրհնածը...

Քարամը Ասլու հտեից գնալիս՝ երբ որ
հասել ա Մին գետի սաբը, ընտեղ տեսել ա
մի հարալու (վիրաւորած) պախրակով հոր-
թերը կշտին տխուր, տրտում կանգնած։ Եդ
բանը Քարամի սրտին շատ դիպել ա, ինքն էլ
նստել ա նրանց կշտին ու նրանց սուգն ա-
րել...

— Խեղճ , . . բացականչեց Պողոսը . . .
Արուծին, հա էդ քարամի անումն իմացել
եմ, ամմա իսկի չեմ գիտում, թէ դա ով ա
ըլել, ինչ ա ըլել։ Դու էդ էլ կը գիտենաս...

— Անկաջ գիր հս քեզ ասեմ։ Մի տէր-
տէր ու մէկ մոլլա են ըլել, էրկուսն էլ էրե-
խայ չեն ունեցել։ Սրանք մէկ մէկու խօսք
են տըւել, որ թէ իրանց էրեխայ ըլի, ու
մէկին տղայ, մէկէկինը աղջիկ, նրանք իրար
ուզեն։ Պատահում ա որ տէրտէրին աղջիկ

ա ըլում, մոլլին՝ տղայ։ Աղջկայ անումը դը-
նում են Ասլի, աղի անումը՝ Քեարամ։ Ով որ
տարով կը մեծանայ, սրանք օրով են մեծա-
նում։ Ժամանակը որ հասնում ա, մոլլէն
գնում ա տէրտէրի մօտ որ աղջիկն ուզի.
տէրտէրը նրան խօսք ա տալի ճանփու դը-
նում, յետոյ ինքն աղջիկը վեր ա կաշնում
փախչում։ Մոլլէն էդ չի իմանում, տղին ու-
ղարկում ա, թէ դէ՛ գնա նշանածդ վեր կալ
բեր։ Քարամը գնում ա տէրտէրի տունը,
տեսնում ա որ ոչ տէրտէր կայ, ոչ Ասլի։ Եդ
որ իմանում ա, ջուշուն ա դառնում, աղջը-
կայ էշխու սիրով վառում ա, աչըզ դառ-
նում, ընկնում նրանց հտեիցը, ձանապար-
հին ինչ որ պատահում ա, մարդ, ծառ,
ուր, անձրեհ, ձիւն, քար, սար, ամենքին էլ
խազով հարցնում ա, թէ իր Ասլին չեն տե-
սել . . . Ամենքն էլ նրան պատասխան են
տալիս ու տեղը նշանց տալիս. մենակ մի չի-
նարի ծառ չի խօսում, պատասխան չի տա-
լիս։ Քեարամը խազով նրան անիծում ա,
չինարին էն սահաթին չորանում ա։ Մէկ էլ
մի քեալա ա պատահում, մեռած մարդու
մի չոր գլուխ, սարնըվէր գլորելիս ա ըլում։

Քարամը խաղով կազնացնում ա նրան, «Կալ-
նիր, ասում ա, դու մարդու գլուխ ես, դա
հա լաւ կիմանաս, ուր ա գնացել իմ Ասլին»:
Քեալլէն ասում ա՝ դու կը գտնես նրան, ամ-
մա մուրաղիդ չես հասնիր. դու կէրես, կը
փոթոթուես ... ասմա՝ «Եանը՛՜ Քեարամ, թու-
թու՛ Քեարամ, եան, Քեարամ» . . . Վերջը,
էլ ինչ գլուխդ ցատցնեմ, գթնում ա Աս-
լուն: Սրանք իրար որ տեսնում են, աւելի են
գժուում մէկ մէկու սիրով: Ասլին էլ Քեարա-
մին ա ուզում. մի սաղ էլ նա ա ձեռքն
առնում, իրա սէրը խաղով իմաց տալիս Քեա-
րամին: Տէրտէրը որ տեսնում ա էլ ճար չը
կայ, Քեարամին ասում ա. «Թէ որ դու քու
խաղերովը բաց կանես իմ աղջկայ կուրծքի
մէր տւած արծաթէ կօճակինին, ես նրան
քեզ կը տամ» . . . Քեարամը խօսք ա տալիս,
սազն առնում ա, չորում ա աղջկայ առա-
ջին: Տէր Ստուած, ինչէր ա ասում, ինչէր,
ինչէր . . . կոճակինին սկսում են բացել,
հէնց որ մնում ա մէկը, էն էլ ուզում ա
թէ բացի, մէկէլ ծէրիցը մէկէլ կօճակինին
էլի մէր են ընկնում, կօճկում են . . . Էս
պէս՝ խեղճ Քեարամը մի կողմից բաց ա ա-

նում իրան խաղովը, մէկ էլ կողմից կօճակ-
նին մէր են ընկնում, չունքի տէրտէրը թըլի-
սիմ ա ըլում արած, որ չը բացին: Եսպէս
խեղճ Քեարամը ասում ա, ասում, ասում,
ասում, մէկ էլ սաղը կրակ ա ընկնում, վառ-
ւում, էդ կրակը դիպչում ա իրան, ինքն էլ
ա սկսում էրկի: Ասլին ուզում ա թէ
հանգցնի, կշտին մի փարչ ա ըլում: Վրայ ա
բերում ածում վրէն. հէնց իմանում ա թէ
ջուր ա, դու մի ասիլ նոթա... Էդ նոթն էլ
որ վրէն չի ածում, խեղճ քեարամը անդն ու
տեղը էրվում ա. դառնում մի անձղակոթ:
Նրան տանում են թաղում: Ասլին էլ չի հե-
ռանում նրա գերեզմանիցը: Սաղը ձեռին
էնքան ածում ա, սզում, լաց ընում, որ մէկ
օր էլ գերեզմանիցը կրակ ա դուս գալիս
նրան էլ էնտեղ էրում... Նրանց գերեզ-
մանի վրայ յետոյ էրկու վարդի թփեր են
բանում, կրկուսի մէջ տեղն էլ մի փշի ծառ:
Վարդերն իրանց ճղերը մեկնում են, որ ի-
րար փաթաթւին, մէջ տեղի փշի ծառը չի
թողնում...

Կօպիտ Պօղոսի սիրտն այնքան քնքշացաւ.

այդ պատմութիւնից, որ աչքերն արտասուքով
լցեցան:

— Խեղճերն իրանց մուրադին չեն հասել,
վերջն էլ էլեւել են... Արութիւն, էրնէկ
ասած չըլէիր, սրտունքս դարդ դառաւ:

— Ի՞նչ շատ անխելք ես, Պօղոս . . .

Այա, եղ դուռստ էլած բան խօս չի, էդ
հէքեաթ ա, մօզոնած բան ա, մարդը վսնց
կէրէի, մեռած մարդու գլուխը, ես ծառը,
քարը վսնց կը խօսին...

— Ի՞նչ ա ասում, . . . Ամա ի՞նչ դա-
լում տէրտէր ա ըլի. աղջիկը թուրքի չի
տւել... Զէ, որ մօզոնովի բան ա, էլ ես
նրա անըծքին չեմ հաւատալ: Ախրր էդ
թուրքերը հորսկանութիւն անելու չնորհր չու-
նեն, էնդուր ա անըծել հորսկաններին. . .
Ուզեցել ա հայ աղջիկ առնի, էն էլ տէր-
տէրի . . . Իսկի մեր տէրտէրն իր աղջիկը
ինձ չի տալիս, ասում ա՝ ես հորսկանին աղջիկ
չեմ տալ... Ես հիմի կը տեսնեմ, թէ վսնց
չի տալ: Ես քեարամի նման աչրդ չեմ դառ-
նալ որ ասի արի աղջկանս կօճակնին բաց
արա, մի գիշեր վեր կառնեմ ու հայդէ...

— Պօղոս, էդ թողներ, խօսքը կտրեց

Արութիւնը: Ես քեղ հետ խօսալու բան չատ
ունեմ, տեղը չի եկել, որ ասեմ: Գու լաւ
աղայ ես, քու սիրտը չար չի, ամա շատ ես
անտաշ: Այա, մօրդ խաթրն ինչի՞ չեա պա-
հում. պառաւ կնիկ ա, կսկծից էրած, խո-
րոված...

Արութիւնը, որ ծածկւել էր մի կեղծ
դիմակով, և խօսում ու դատում էր Պօ-
ղոսի հայեացքով, այժմ սկսել էր իր դիմակը
յետ քաշել, որովհետեւ էլ միտք չունէր նրա
հետ ընկերութիւն անելու: Մի կողմից իր
առաջան վիճակը, միւս կողմից իր մօր կա-
րօտը աներկութեամբ քարշում, տանում
էին Արութիւնին. որի մէջ վառ ու պայծառ
լինելով սիրոյ զգացմունքը, չէր կարողանում
կարծրացնել մի այնպիսի սիրտ, որ ի բնէ
չէր ստեղծւած կարծր լինելու... Արու-
թիւնի առաջարկութիւնը՝ մօր վերաբերու-
թեամբ, Պօղոսի սիրտը բնաւ չը շարժեց, այդ
զգացմունքը նրա համար մի խորթ բան էր, ոչ
զղալի էր, ոչ էլ հասկանալի...

— Բահ, նրա բաթառ իմանը... պա-
տասխանեց Պօղոսը:— Ծօ մի թող կորչի, բան
չունեմ: Պառաւ մարդ հօ չեմ, որ խրատ ես

տալիս ... Արութին, հլա ինձ ականջ դի ...
Ես Խաչընեցոց անուամբ իմ պապերիցն եմ
լսել ... Թէ որ դու նրանցից ես, հունա-
բլդ նշանց տուր...

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ուզում ա-
նես...

— Ինձ քոմադ արա, Արութին ջան...

— Ի՞նչ ա, ուզում ես տէրտէրի արջը-
կան փախցնեն...

— Ինձ հետ արի, քու արեւին դուրբան,
Արութին...

— Ձեմ դալ, ես դալի չունիմ, ինչ ուզում
ես, արա...

— Հըմ ... չես դալ համ ... Են տղի
հէրն անիծած, ով քեզ չսպանի ... մի դալ
... էլ ձեր տան երեսը չես տեսնի...

— Ե՛յ, լօռւայ արջ, բերանըդ քեզ պահի
թէ չէ, տեսնում ես էս խանչալը, սրանով իմ
հէրը շատ դղրաշի գլուխ ա կտրել, հիմի էլ
իմ ձեռքն ա ընկել ... Սխմախ, տէրտէրը
քեզ համար ա աղջիկ պահել, որ դու քաշ
տաս չօլէ չօլ պցես ... Թէ որ նա քեզ
սիրում ա, ինչի՞ էն օրը ջրի ճամփին քեզ
բիաբուռ արաւ, թէ՛ «խնչեմ վրէդ, դու ու՛

ես, որ քեզ ուզեմ» ... Քու տունը ծակի
ոչ. մարդը մարդ ա, խողը՝ խող, արջն՝ արջ։
Ես էնքան հորսկաններ եմ տեսել, որ քու
գլխի մազի համբարքովը մին։ Նրանք որ
մարդամէջ են մտնում, ոչով չի իմանում, որ
քօլի մարդիկ են, ամա դու ամեն տեղ էլ
քու արջութիւնը նշանց ես տալիս։ Ախր ես
քեզ ի՞նչ եմ ասում, դու ինձ ի՞նչ։ Մօրըդ
հետ ի՞նչի ես խանչալով խօսում, այ, ես քեզ
ինչ եմ հարցնում...

— Դէ որ ըտէնց ա ըտէնց, իմ աղ ու
հացը քու աչքերը քօռացնի...

— Ես քու աղ ու հացը չեմ կերել. որ
իմ աչքերը քօռացնի։ Բա էնքան խողի ու
պախրի մսերով առած աղ ու ալրիցն ինձ
փայ չունեմ։ Մէկ օր էլ ա դարտակ յետ չեմ
դառել, քեզ նման չեմ ասել, որսըս կապել
ա ... Կը կարմրես, հա՛րա, արջ...

— Ես արջ չեմ, ամա դու էլ ես։ Ղորդ
ա լեզուդ փոխել ես, ամա էլի Ղարաբաղի է-
չերիցն ես...

Պօղոսի այս պատասխանը Արութինի
ցեղական ցաւագար տեղին դիպչելով, նրան
գժւացրեց։ Նա ձեռքը դրաւ խանչալի կոթի

վրայ և մոռանալով Պօղոսի բառքառը, իր բառքառով արտայայտեց բարկութիւնը, ասելով,

— Սէրտս ասմա՝ երկաց էս սըհաթըմս ընի դամադ կոխէ էս լըկուտէն փորը... Այգեհագա, քօթէթ, էդ հիւրըս էշ ասըմ...

— Բա՛ ... սա քաջքեր ա ունեցել, ես նոր իմացայ։ Ախրը ես էլ եմ ասում, ինչի՞ իրանց քօկերը թողած՝ եկել ա մեր հանդերումն ա հորսկանութիւն անում։ Ախպէր, ես քաջքոտ մարդի հետ դաւի չունիմ. վեր կենամ ըռադ ըլիմ ըստեղանց. էս սրդիանց սրդի էկաւ գլխովըս ընկաւ։ Էնդուր են ասել «սատանէն նադարաթ կըլի» Է՛ ... Վէր քցես, սպանես, ով իմանայ՝ ինչ կասի։ Փուշը որ փուշ ա, մի ծոխի գալդայ ա անում. ես էն վախտը փշից էլ բէթար պիտի ըլիմ. սա էս սըհաթս իմ դալդումն ա նստած։ Ասած ա, «գոգումըդ նստեմ, միրուքըդ փետեմ»։ դըրուստ սրա բանն ա ... Մի հետ սիլլա տամ, օխտը հետ շուրդուբանի կը տայ, սա էլ ա ուզում մարդի վախացնի։ Փառք քեզ, զըկե՛ն ... Վեր կենամ ըռադ ըլիմ, սրա արիւնը չընկնեմ ... Ով գիգի՞ իրա մօր

մինուճարն ա ... Ե՛հ, ես էլ ինչ եմ ասում ... Ով գիգի՞ սր թոկից ա վախել. թէ լաւ մարդ ա, ինչի՞ իրանց տանը չի կենում...

Այսպէս ինքն իրան երկար մըմուտով Պօղոսը վեր առաւ հրացանը և ուղեց դուրս գնալ, որ մի անակնալ տարաբախտութեան պատճառ չը գառնայ, բայց Արուծիւնը որ արդէն դղջաց իր անհամբերութեան համար, չուղեց թոյլ տալ նրան և կանչեց ետեւից սպառնալով՝

— Ե՛յ, ախմախ Լօռի, արի նստի տեղդ, թէ չէ մի գիւլլա ա՛ քու ջանը...

— Հա՛—հա՛—հա՛ . . . քրքշաց Պօղոսը։ Տօ քու գիւլլիցն ո՞վ ա վախում, իմ գիւլլէն քոնիցը պակաս ա՛ ... քաջքերըդ ...

Արի նստի, արի. ես քաջքեր չունեմ... Ես քեզ խօսք եմ ասում, քու լաւութիւնն եմ ուզում, դու ինձ ասում ես՝ էշ ես...

Բա ինչի՞ դու ինձ արջ ես ասում. դու որ ինձ չասես, ես էլ քէզ չեմ ասի։ Քու աչքիդ գիրանը դու չես տեսնում իսկի ...

— Լաւ, լաւ, արի նստի. Քեզ հետ մարդ չի բարըչի։ Էս ա քանի ամիս ա, մըտեղ

հաց ենք ուտում, դեռ մին մինի չոռ չենք ասել, էգ քու հունարը չէր, իմ հունարն էր: Ես էլ որ քեզ նման ըլէի, պիտի ամեն օր ըսէնց կուէինք: Ես էլ չեմ ուզում ըստեղ մնալ. Լիզուց պիտի գնամ բաղաք: Դու մի ձի կը քրէհես, կը գաս սլախբէն կը տանես:

— Բաղաք ինչի՞նք ես գնում. ուզում ես մորթիքը տանես ընտեղ ծախսես:

— Զէ մորթիքը քեզ ըլին դիւի էլ, ես քեզանից փայ չեմ ուզում, փեթակնին էլ դիւի քեզ ըլին ...

Հը՛մ ... խռովեցիր հա՛ ...

Խոնչ խռովելու բան ունիմ. բալքի դու ես խռովել, էնդուր ես ըտենց ասում, արի բարըչենք, արի ... մինի մինի բախշենք...

— Արի բարըչէ՛նք — ինչի՞ դու չես գալիս ինձ մօտ, թէ որ բարըչին ուզում ես ... Ուզում ես, որ ես գամ քու ոտքը՝ ... Դու ինքզ փեր կաց արի ինձ մօտ, ասա մեղայ Աստծու, յետոյ ես քեզ կասեմ ...

— Դէ որ ըտէնց ա, ոչ դու արի ինձ մօտ, ոչ ես քեզ մօտ: Դու էլ փեր կաց, ես էլ: Դու դէպի ինձ արի, ես դէպի քեզ:

— Դէ լաւ ըտենց անենք, դարաբաղցին

անկոտրում կըլի: Էս մի ոտը . . . դէ մի ոտն էլ դու առաջ դիր ... Էս էրկու ոտ ... հիմի մէկէլ ոտըդ փոխի . . . Էս իրեք ... դէ ասա՝ մեղայ Ասծու ...

— Ինչի՞ առաջ դու չես ասում ...

— Զէ, առաջ դու պիտի ասես,

— Զէ, դու պիտի ասես ...

— Ոչ դու, ոչ ես, մըտեղ ասենք ...

Մըտեղ մնց ասենք, դէ դու ասա, ես էլ քեզ հետ կասեմ ...

Վերջապէս «Մեղայ Ասծու» ասելը գըլուխ չի գալիս: Սերտ սիրով գգվում են միմեանց և համըրում իրար շրթընքից եյտոյ լուռ ու մունջ իրանց տեղերը նստում — մէկը խարոյկի այս կողմին, միւսն այն, մի հոգեկան անդորրութիւն և երանական զըւարճութիւն զգալով ...

— Արութին, քաղըումն ի՞նչ ունիս, որ ուզում ես գնաս, խօսեց վերջապէս Պօղոսը:

— Ընտեղ ընկերնի ունիմ, պիտի գնամ տեսնեմ:

— Ընկերնիդ ի՞նչ են չինում ընտեղ ...

— Վարժապետ են, էրեխէք են կարթացնում:

— Բա ասում ես ընկերնի ունիմ ...
Վարժապետ ... Երեխայ ...

— Զարմանում ես հա՛մ . . . Մի զարմա-
նալ: Ես էնքան կարժալ գիտեմ, որ ձեր
տէրտէրը իմ կէսի կիսի դադամ չի գի-
դում ...

— Հա՛մ ... դէ ըտէնց կասէիր է՛ ...
հը՛մ ...

— Ինչի՞ ես «հը՛մ» անում ...

— Դէ ասում են՝ շատ կարթացողը կը
գժւի, ես էլ ...

— Մի հաւատալ, շատ կարգացողը չի
գժւիլ, քիչ կարգացողը կը գժւի ...

— Բա մեր տիրացուն ինչի՞ չի գժւում,
ասում են քիչ ա կարգացել,

— Ենդուր չի գժւում, որ հէնց իմանում
ա, թէ շաա ա կարթացել, որ գիտենար, թէ
քիչ ա կարթացել, կը գժւէր ...

— Եանի գրուտա՞ ես ասում, դու գրի
սեն ու սպիտակը ջոկում ես . . . ես չեմ
հաւատում ...

— Ինչի՞ չես հաւատում.

— Դէ մեր գեղումն ով որ կարգալ գի-
դի, էլ մորթ չի անում, ասում ա՛ մեղք ա.

չնահորսն էլ չեն ուտում. ասում են՝ հա-
րամ ա ...

— Դրանք սարսաղ են, ինչ են գիտում
մեղքը ո՞րն ա, վարձը որը: Բա ինչի՞ ուրիշի
մորթածն ուտում են. դի՛մ մէկ չի, թէկուզ
գողացած, թէկուզ գողի հետ մըտեղ կերած:
դրանց գլխումը խեղը չը կայ, ինչ որ ըղորթ
ա, էն դրանց համար սուտ ա, ինչ որ սուտ
ա, էն ըղորթ ...

— Դու շատ գրուտա ես ասում, Արու-
թին ... էլ դրանց խօսքին ես չեմ հաւա-
տալու:

— Ինչի՞, թէ որ ըղորթ բան կասեն, ես
մի խելքը կըտրեկու բան, հաւատա:

— Դէ ես ինչ եմ գիտում ըղորթը ո՞րն
ա, սուտը որը: Երկու տարին, ես թէ չէ՛ ե-
րեք տարին մի հետ անջախ եմ ժամ զը-
նում: Գնացած վախտըս էլ՝ մընում եմ պըլը-
շած, զարմացած, մտքումս տսում եմ՝ եա-
րաբ էս ինչ են անում, ինչ են ասում: Մտիկ
եմ տալիս ուրիշներին, երբ որ նրանք ծուռդր
են գնում, ես էլ եմ ծռնդր դնում. էրեսիս
խէշահանելն հօ գրուտա չեմ գիտում . . .
աղօթքներիցն էլ մի եւն եմ գիդում, մին էլ

տէր ողորմեան: Եղ էրկուսն էլ էնդուր եմ սովորել, որ գրանցից շատ են ասում:

— Տէր ողորմեան շատ կասեն՝ էն էլ մէծ պատին, եր շատ չեն ասիլ ...

— Ի՞նչ ես ասում, Արուծին, մեր տէր-տէրը հենց և ա, որ ասում ա, և հա և, և հա և ...

— Ում աչքերը որ գիր տարած ա ըլում, նրա աչքին մենակ եերն են էրևում: Հալ-բաթ ձեր տերտերի աչքերն էլա գիր տարել, չունքի շատ կըլի կարթացած ...

— Հա ... Նրա աչքերին չեշմակ էլ կայ ... շատ չար տէրտէր ա: Մի հետ մի լաւ չափալախ տաւ տիրացւին. փուշ կենդա-նի, ասում ա, նշանն ուր ա, ինչի ես հա-նել: Այսրը գրքերի արանքներումը թղթի կտորներ են դնում, նրանց նշան են ասում, Արուծին, դու էդ գիտես ...

— Գիտեմ:

— Դու սուտ ես ասում, Արուծին, չես գիտում: Թէ սր դու կարթալ ես գիտում, արա ասա, էն զագի անումն ի՞նչ ա, էն որ գիրը դնում են վրէն, կարթում ...

— Նրան կասեն գրքակալ ...

— Հա, գրքակալ, գրքակալ ... Եղ գըր-կալի անումն ոչով չի գիտում, ես էլ մեր տիրացւիցն եմ իմացել ... չէ, լաւ գտար: Արուծին, դու որ ըտենց լաւ կարգացող ես, բա ինչի մի օր մեր ժամէ չես գնում,

— Մենք հէնց ամին քչեր էլ ժամերումն չենք ընում. հրէս էս ժամ չի: Պօղոս, հիմի բու խելքովըդ, Աստոծ մեծ կըլի, թէ էս ժամը ...

— Հալբաթ Աստուած մէծ կըլի ...

— Աստուած որ ժամիցը մեծ ըլի, էլ կը կարայ ժամումը տեղաւորիլ ...

— Բա դու չես տեսիլ ժամի Աստուածը...

— Էն Աստուծու պատկերն ա, ինքը հօ չի: Աստուած շատ մեծ ա, շատ է շատ ... Նրա պատկերը ոնց որ ժամումն ենք գնում, որ ամեն մարդ տեսնի, ընէնց էլ պէտք ա մեր սրտումը, մեր մտքումն ըլի: Մեր սրտումն ինչքան մեծ բան ասես, կը տեղաւորի: Երբ որ Աստուած մեր սրտումը կըլի, նա միշտ մեզ հետ կըլի, էլ ոչ մենք նրան ման կը-դանք, ոչ էլ նա մեզ: Հիմի դու էս ասա. մէկ մարդու սիրտ որ խտակ չըլի, էլ ընտեղ Աս-տուած կը կենայ:

— Դու էգ ինչե՞ր ես ասում, խոր խոր տեղերից ես խօսում: Արութիւն, դու էն մեծ գիրը կարդացել ես, էն որ ասում են՝ ինչ ասես՝ միջին կայ. ով որ, ասում են, էն դիւի կարդացած ըլի, կը գժւի,

— Ես էն չիմ (դիւի) կարդացել եմ, Պօղոս ...

— Ի՞նչ ա ասում ...

— Հաւատա՛:

— Դու բալքի չես գիտում, թէ ես ո՞ր գիրքն եմ ասում: Նա մեծ ա է, շատ մեծ: Մեր տիրացուն որ խտտում ա, անջախ ա տանում ժամ, էնքան ծանդրա: Աշխարհքիս տակին ինչքան որ սրբեր են ըլել, բաներ են ըլել, չիմ էլ նրա միջին գրած ա:

Գիտեմ, գիտեմ, ես էն դիւի կարդացել եմ:

— Բա որ կարդացել ես, ինչի՞ բա մի օր էլա նրա միջի սրբերիցը մի բան չասեցիր:

— Դէ հիմի արի ասա էլի՛ ... Միտքս վրէս չէր, թէ չէ՝ քեզ շատ բան կը պատմէի: Քո ուղած սրբերի տեղակ ես քեզ կը պատմէի մեր զօշաղ պապերիցը, որ իմանայիր, թէ

մենք ո՞վ ենք, ի՞նչ ազգ ենք ըլել ու հիմի ի՞նչ օրն ենք ընկել:

— Դէ հիմի ըլի, մի երկու բան էլա ասա որ մտքումս պահեմ, էլ քեզ մտիցս չը քցեմ:

— Հիմի ի՞նչ ասեմ, Պօղոս, Հիմի միայն էնքան կասեմ, որ մենք հայ ենք հայ: Ինչքան որ հայեր կանք, դիւի էլ ախպէր ենք, դիւի էլ մի հօրից ու մի մօրից ենք բնամ էկել: Մեր պապի պապի, նրա էլ ապուպապի անումը ՀԱՅԿ ա ըլել, էնգուր ենք մենք հայ ասում:

«Մեր պապ Հայկը էնպէս մի քաջ տղամարդ ա ըլել, որ իր որդոց ու թոռների հետ հաղար հաղար մարդի ընտ ա ըլել կուելիս: Էնքան ջանով ա ըլել, որ նրա նետ ու անեղը տասը մարդ կարալիս չի ըլել տեղիցը ժաժտալ: Նա մի դուշման ա ունեցել, անումը Բէլ: Էս Բէլն էլ էնքան աժդահա, էնքան ջանաւար մի մարդ ա ըլել, որ էն ժամանակին ինչքան մարդիկ են ըլել աշխարքիս վրայ չիմնին էլ իր ձեռքի տակն ա հաւաքել, դիւի ունանքն էլ նրան գլուխ են վէր բերել, աւել են՝ «Մեր Աստոծը դու ես որ կաս,

ուրիշ Աստոծ չենք ճանաչում»։ Մեր պապ Հայկը նրան գլուխ չի վեր բերել, ասել ա՛ «դու շուն ես, դու աղւէս ես, դու ո՞վ ես, ի՞նչ ես, որ ես քեզ գլուխ վեր բերեմ»։

«Բէլը բարկացել ա, անհամբարք դօշուն ա հաւաքել ու գնացել, որ մեր պապ Հայկին սպանի։ Արեւին մատաղ մեր պապ Հայկի, ասել ա՛ «Տղէք ջան, դօշաղ կացէք, իմ անումը չը կտորէք, ես դրա ջամգարը էսօր դուրդ ու դուշի փայ կըշինեմ»։ Հէնց ըտենց էլ արել ա։ Հաւաքել ա իրա տղոցն ու թոռներին, գնացել ա Բէլի անհամբարք դօշունի առաջը կտրել։ Իրա նետ ու անեղը որ զել ա, վրայ արել, նետը, գլուխի նման դժժալով Բէլի սրտին ընէնց ա դիպել, որ պղնձով ծածկած դօշի միջովն անց ա կացել, մէջքովը դուրս եկել։ Աժդահա Բէլը պառաւած ա՛ճարբու նման ճըռճըռալով, գլորել, վեր ա ընկել, սատկող հաւի նման կլափին տալով շունչը փչել։

—Պէ՛, հիմի հասէք, տղէք ջան,—ձէն ա տւել մեր պապ Հայկը,—դէ հիմի հասէք էդ անիծածներին կոտորեցէք, որ էլ մեր աշխարքումը ոտը չը դնեն»։

«Բէլի դօշունը որ տեսնում են իրանց պաշտած աստրծուն սատկացրած՝ դողում սարսափում են։ Հայկի ասլան տղէքն ու թոռները որ հասնում են, ընկնում նրանց մէջը, ոչխարների նման ջարդում, նրանք էրեսները շուռ են տալիս փախչում։ Եդ օրւանից զէսը էլ ոչով չի համարձակում մեր աշխարքի վրայ կռիւ գալ, Հայկի անունն էլ մըհրում ա մեզ վրայ ու մեր աշխարքի վրայ, մենք առում ենք ՀԱՅ, մեր աշխարքն էլ ՀԱՅԱՍՏԱՆ։

—Բա՛հ, նրա արեւին մատաղ, հրէն տղամարդն է։ Մենք էլ պիտի ասենք մարդ ենք էլի, փափախ ունենք գլխներիս։ Բա հիմի խի ենք ըսենց վատացել, Արուծին, բա չենք ամանահում։

—Էնդուր ենք վատացել, փչացել, կնիկ դառել, որ մեր պապին թողած, բէլերին ենք պաշտում, ըղորթը թողած, մեզ սուտ բաներ են քարոզում։ Ինչիդ ա պէտք, դու հիմի իմացար, թէ ինչ մարդ ա ըլել մեր պապը։ Ով որ իր պապին չը քաշի, նրա նման չ'ընի, նա պէտք ա նրա հալալ թոռը չըլի։ Թէ որ սաղ կը մնամ, մէկ օր էլ կը պատահենք մին

մինի, էն վախտը էսպէս բաների վրայ շատ կը խօսենք: Ասած ա, «Սար սարի չի ռաստ դալ, մարդ մարդի ռաստ կը գայ»: Դու զօշադ կաց, մենք յետոյ շատ բաներ կանենք: — Քու բերանին մատաղ, Արուծին: Ասած ա, «Առաջին տեսնելիս ընկեր, վրայ էրկուսին՝ ախպէր»: Մէկ էլ որ գաս, իմ ախպէրը կըլիս, իմ ախպօրս անուռն էլ էր Արուծին, Լնդուր ա իմ մէրը քեզ որդու նման սիրում: Ողորմած հոգին հարուր թուրքի չէր ասիլ, թէ Աստուած ա ստեղծել: Թէ սր նրա անուժը մարիցս կընկնի, քու անուժն էլ կընկնի: Հիմիկուց դէնը դու իմ ախպէր Արուծինն էս:

— Մէնակ ես չեմ քո ախպէրը, ինչքան որ հայեր կան, դիպի էլ մեր ախպէրքն են, քու մէրն էլ իմ մէրն էլ ա, դիպի ունանց մէրն էլ: Պօղոս, դու նրա սիրտը մխիթարի, պատիւը պահի: Քու օրումը նրան մի քաղցր խօսք չես ասած, մի անդամ նրա սիրտը չես շահած, էդ լաւ չի, Պօղոս, լաւ չի, Աստուած չի վեր կաշնիլ, կը բարկանայ գլխով:

— Հաւատա՛, Արուծին ջան, հէնց հիմի դիւամ թէ չէ, պիտի մօրս ծծերիցը պաշեմ,

մեղայ ասեմ. էլ իմ օրումը նրան չօռ չեմ ասիլ միշտ «ջանով» կը խօսեմ: Խեղճը կըզարմանայ, կասի՝ «էս վոնց էլաւ, որ ըսէնց էլաւ»: Հալալ ըլի քու կերած կաթը Արուծին ջան, իգիթ ես, իգիթ ...

— Դէ լաւ շատ մի գովի: Ենքան խօսեցինք որ լուսացաւ: Դէ, մնաս բարով, ես գնում եմ:

— Քնաս բարով, քէ մատաղ, — ասաց Պօղոսը և նրա աչքերը լցեցին արտասուներով: Մեր տղէքը համբուրեցին միմեանց: Արուծիւնը հեռացաւ ուրախ զըւարթ, իսկ Պօղոսն ընկաւ խոր տխրութեան և մտածութեան մէջ:

— Ո՛վ էր սա, սրտեղից եկաւ. ինչո՞ւ եկաւ. ինչո՞ւ բաժին չստացաւ մեր աշխատանքից. և սրա նման շատ հարցումներ արաւ ինքն իրան Պօղոսը և վերջն այն հղորակացութեան եկաւ, որ Արուծիւնը մի անգին գիւտ էր իր համար, բայց ինքը չիմացաւ նրանից օգուտ քաղել բարոյապէս: Այս գէպից յետոյ Պօղոսի մտածութեան հղանակը փոխեց. նա սկսեց երկակայեղ իրան մի այլ աշխարհ, և միշտ կարօտով սպասում էր Արուծիւնին, որ նա գայ և մտցնէ նրան այդ նոր աշ-

խարհը: Արութիւնն այլ ևս չը հանդիպեց
Պօղոսին. բայց նրան հանդիպեցին Արութիւնի
նման մարդիկ, որոնք հետզհետէ ծնունդ ա-
ռան և ժամանակակից լուսաւոր մտքերը
տարածեցին մեր երկրի մութ ու մոռացած
խորշերում ու անկիւններում:



Վ Ե Ր Ջ



ՀՀ Ազգային գրադարան



NL0585557

ՀՀ Ազգային գրադարան



NL0585556

ՀՀ Ազգային գրադարան



NL0585555

